Ազգ
Azg
19 ԱՊՐԻԼ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 69(4688)
ISSN: 1829-1651

# Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կոչը

Այս տարի Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի եւ Հայոց ցեղասպանության հիշատակման օրվա համընկնման կապակցությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի գլխավոր քարտուղարներ դոկտ. Օլավ Թվեյթն ու դոկտ. Վիորել Իոնիտան, իրենց զորակցությունը հայտնելով Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցուն, հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով բոլոր անդամ եկեղեցիներին՝ զատկական ուղերձներում վկայակոչելու Հայոց մեծ եղեռնի 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը: Այս մասին հայտնեցին Մայր աթոռ սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգից: «Այս տարի Զատկի կիրակիի հանդեպ մեր մոտեցման ոգով՝ ի Հիսուս Քրիստոս մեր բոլոր հավատակից եղբայրներին եւ քույրերին կոչ ենք անում միանալ հայ ժողովրդին՝ հայերի եւ ցեղասպանության այլ զոհերի համար աղոթք բարձրացնելով:

Եկեք հիշենք, թե ինչ ասաց Քրիստոս. «Ես իսկ եմ հարություն եւ կյանք:

Ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի. եւ ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. 11:25)», մասնավորապես ասված է ուղերձում:

# Սերժ Թանկյանը՝ Օբամային

Ինչպես ավելի վաղ «**Ազգը**» տեղեկացրել էր, ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ապրիլի 21-ին այցելելու է Լոս Անջելես՝ այստեղ համացանցով ԱՄՆ քաղաքացիների հետ շփվելով սկսելով իր քարոզարշավը: «**Սիսթեմ օֆ ը դաուն**» խմբի մեներգիչ Սերժ Թանկյանը ապրիլի 21-ին Կալիֆոռնիայում կազմակերպում է. «Պարոն նախագահ, կատարեք Ձեր խոստումը, արդարությունը հասցրեք հայերին»: Թանկյանը նաեւ համացանցով է տարածել է հետեւյալ կոչը. «Օբաման պետք է տեսնի հայկական համայնքի խորին հիասթափությունը՝ նախագահության տարիներին իր խոստումը չկատարելու համար: Նա պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը եւ արդարությունը հասցնի հայերին: Իսկ մենք, լինելով Սփյուռքի ամենամեծ հայկական համայնքը՝ պետք է մեր կոչը հասցնենք նրան: Կոչ ենք անում բոլոր հայերին՝ միանալու մեզ՝ մեր ձայնը տեղ հասցնելու համար»:

**Մ. Խ.**

# «Մեկնաբանություն» Զիաֆեթ Ասկերովից

«ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի ԽՎ-ի , ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթերը, ինչպես նաեւ համաշխարհային առաջատար տերությունների ղեկավարների հայտարարությունները խոսում են ղարաբաղյան հակամարտության հարցում Ադրբեջանի արդարացի դիրքորոշման մասին: Այդ պատճառով էլ Հայաստանը խուսափում է ԵԱՀԿ-ից բացի այլ միջազգային կազմակերպություններում ղարաբաղյան հակամարտության քննարկումից»,- ասել է Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Զիաֆեթ Ասկերովը՝ «մեկնաբանելով» ԵԽԽՎ-ում Լեռնային Ղարաբաղի հարցով ենթակոմիտեի շուրջը հայաստանյան պատվիրակության դիրքորոշումը: Սկսենք նրանից, որ Զիաֆեթ Ասկերովը միանշանակ ստում է, երբ թվարկելով միջազգային կազմակերպությունները, ասում է, թե նրանց ընդունած փաստաթղթերը, ինչպես նաեւ ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների առաջնորդների հայտարարությունները «խոսում են Ադրբեջանի արդարացի դիրքորոշման մասին»:

Ադրբեջանի դիրքորոշումն արդարացի չէ, չի համընկնում խնդրի միջազգային հանրության ընկալումներին, կարգավորման՝ միջնորդների եւ Ասկերովի հիշած կազմակերպությունների կողմից աջակցվող հայեցակարգին: Այդ իսկ պատճառով էլ վերջիններս հորդորում են հարցերը կարգավորել խաղաղ ճանապարհով՝ հենվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների եւ նորմերի վրա:

Դա գիտակցում է նաեւ Զիաֆեթ Ասկերովը: Հակառակ դեպքում իր բարձրակոչ հայտարարությանը հավելում չէր անի. «Ցավոք, այսօր միջազգային իրավունքը չի կարող ցուցադրել իր ողջ ուժը... Դա ցույց է տալիս, որ միջազգային իրավունքը չի աշխատում, եւ Ադրբեջանն այդ իմաստով պետք է ավելի հզորանա»:

Ասկերովի մակարդակի պաշտոնյան, ցավոք, չի հասկանում կամ չի ուզում հասկանալ կամ հասկանում, բայց չի կարող խոստովանել, որ Ադրբեջանը չի կարող այնքան «հզորանալ», որ միջազգային հանրությանը թելադրի իր կամքը: Դա անհնար է անել նույնիսկ Թուրքիայի օժանդակությամբ:

Եվ այն, ինչ տեղի է ունեցել ԵԽԽՎ նստաշրջանում, ասվածի ապացույցն է: Չէ՞ որ առանց Չավուշօղլուի ջանքերի ԵԽԽՎ-ում ԼՂ հարցով ենթահանձնաժողովը «վերակենդանացնելու» որոշում չէր ընդունվի: Եվ շատ ճիշտ է վարվել հայաստանյան պատվիրակությունը՝ հրաժարվելով մասնակցել դրա «աշխատանքներին»:

ԵԽԽՎ-ն չունի ղարաբաղյան կարգավորման հարցում միջնորդություն իրականացնելու մանդատ: Առհասարակ, նման հարցերը խորհրդարանական քննարկումների առարկա լինել չեն կարող:

Այլ բան է, որ ԵԽԽՎ-ն կարող է աջակցել, որ հակամարտության կողմերի խորհրդարանականների միջեւ շփումներ լինեն: Բայց դրա համար հարկ կլինի Ստրասբուրգ հրավիրել նաեւ ԼՂՀ-ի Ազգային ժողովի ներկայացուցիչներին: Քանի որ հակամարտության կարգավորման վերաբերյալ միջազգային մակարդակով ընդունված բոլոր փաստաթղթերում խոսքը հակամարտության բոլոր կողմերի միջեւ երկխոսության անհրաժեշտության մասին է:

Զիաֆեթ Ասկերովն ասել է, որ «Հայաստանը խուսափում է, որովհետեւ փաստարկներ չունի»: Ընդհակառակը, փաստարկ կա եւ հնչեցվել է բազմիցս: Փաստարկ չունի Ադրբեջանը, քանի որ համառորեն խուսափում է ԼՂՀ ներկայացուցիչների հետ շփումներից: Հանդիպի ի՞նչ ասի: Պաշտոնական Բաքուն ի սկզբանե ունեցել եւ այսօր էլ միայն մի խոսք ունի. «Ընդունեք Ադրբեջանի գերիշխանությունը կամ մենք կոչնչացնենք ձեզ»:

Քսան տարի առաջ այդ լեզվով է սկսվել «Կոլցո» ռազմագործողությունը՝ Գետաշենում: Եվ, չնայած այն ամենին, ինչ տեղի է ունեցել հետագայում, այդ ոճն Ադրբեջանում մնացել է անփոփոխ:

Այդ դեպքում ո՞ւմ հետ եւ ինչի՞ համար բանակցել, քննարկումներ անցկացնել, եթե արդյունքը կանխորոշված է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ՀՀ սփյուռքի նախարարը հակադարձում է Թուրքիայի վարչապետ Էրդողանին

Ի պատասխան «**Ազգ**»-ի խմբագրի այն հարցին, թե ինչպես կմեկնաբանի սփյուռքի նախարարը Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ Եվրախորհրդարանում արված հայտարարությունը՝ «Եթե Հայաստանը հաղթահարի Սփյուռքի վախը, ապա հարցերը կկարգավորվեն», ՀՀ սփյուռքի նախարարը պատասխանում է.

«Հայկական սփյուռքը Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանության հետեւանք է, եւ Սփյուռքից պետք է վախենա Թուրքիան, քանի որ, ի վերջո, պարտավոր է պատասխան տալ հայրենազրկված Սփյուռքին: Այսօր ի գիտություն պետք է ասեմ, որ Սփյուռքը Հայաստանի հպարտությունն է, հզորությունն է, նրա շարունակությունը: Հայաստանը չի վախենում Սփյուռքից, քանի որ Սփյուռքում ապրողները մեր քույրերն ու եղբայրներն են, Մայր Հայրենիքը նաեւ նրանցն է, եւ ցեղասպանության ճանաչման, դատապարտման հարցում Հայաստանի եւ Սփյուռքի մոտեցումները նույնն են: Հայաստանը եւ Սփյուռքը համազգային խնդիրներում միասնական են:»

# «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ յուրահատուկ կամուրջ Սփյուռքի եւ հայրենիքի միջեւ



ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ, Հեռուստատեսության ու ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի կատարումների ուղեկցությամբ Թեքեյան կենտրոնում երեկ տեղի ունեցավ «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխությունը:

Արդեն 10 տարվա պատմություն ունեցող մրցանակաբաշխությունը գրականության, թատրոնի, գեղանկարչության, քանդակագործության, երաժշտության եւ լրագրության ոլորտներում լավագույն գնահատականներից մեկն է մեր արվեստագետներին եւ մտավորականներին: Ընդունված ավանդույթի համաձայն՝ կարեւորվում են մշակութային ասպարեզում արդեն վաստակ ունեցող արվեստագետներն ու մտավորականները: Կարեւորվում են երբեմն պետության ուշադրությունից դուրս մնացած ոլորտներն ու ստեղծագործողները: Այստեղ առանձնահատուկ ուշադրության են արժանանում նաեւ երիտասարդ ստեղծագործողները, որոնց համար մրցանակն ու դրամական պարգեւը (1.000 դոլար) կարող են խթան հանդիսանալ ստեղագործական հետագա գործունեության համար:

«Հաշվի ենք առել միայն մասնագիտական հանձնաժողովների կարծիքը», ասաց ՀԹՄՄ նախագահ **Ռուբեն Միրզախանյանը**՝ հերթական անգամ փաստելով, որ մրցանակաբաշխությունն անաչառ է:

Թեքեյան մշակութային միության վարչության անդամ **Գայանե Մուրադյանը** նշում է, որ տարեցտարի մրցանակաբաշխության աշխարհագրությունն ընդլայնվում է. «Վահան Թեքեյան» պատվավոր մրցանակին արժանանալու համար այս տարի հայտեր են ստացել ոչ միայն Արցախից, Ջավախքից, այլեւ Սփյուռքից:

Տես էջ 6

# Մի՞թե ինտերնետ հասանելիությունը Հայաստանում հետընթաց է ապրել

*Իրականությունն ու տարբեր աղբյուրներ հակառակն են փաստում*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ապրիլի 13-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած 2010-2011-ի գլոբալ տեխնոլոգիաների հաշվետվության մեջ Հայաստանը ցանցային պատրաստվածության ինդեքսով զբաղեցրել է 109-րդ տեղը, երբ նախորդ տարի 101-րդ տեղում էր: Թվում էր, թե այս տարվա զեկույցը պետք է արձանագրեր մեր երկրի նկատելի առաջընթացը: Ինչո՞ւ:

Հայաստանում ինտերնետ հասանելիության խնդիրը «Արմենտելի» մենաշնորհի տարիներին էր անլուծելի թվում: Սակայն կապի եւ հեռահաղորդակցության ոլորտում մենաշնորհի վերացումը բարենպաստ ազդեցությունն ունեցավ նաեւ սակագների փոխանակման վրա, այսինքն ինտերնետ հասանելիության զարգացման համար: Մեկ ընկերության փոխարեն այսօր մեծածախ ինտերնետ են մատակարարում երեք ընկերություն, որոնցից մեկը իր գործունեությունը սկսել է 2009-ին: Ակնհայտ է, որ հատկապես վերջին մեկ տարվա ընթացքում զարգացումներն այստեղ ավելի մեծ թափով են ընթանում: Ասվածն ավելի առարկայական դարձնելու համար ներկայացնենք Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամից, Հայաստանում «Մայքրոսոֆթի» ներկայացուցչությունից, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացած տեղեկատվությունը:

Տես էջ 6

# «Բնության եւ հոգու էկոլոգիա»

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ



Ցեղասպանության թանգարանի այգու հարակից տարածքում հիմնվեց սոսիների պուրակ: Ապրիլի 16-ին Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության երիտասարդական կազմակերպությունների ասոցիացան 300 սոսի տնկեց նոր պուրակում, ծառատունկին մասնակցեց նաեւ ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահ **Արա Աբրահամյանը**:

Ծառատունկը անցյալ տարվա մարտի 30-ին ՀՀԿ եւ ՌՀՄ նախաձեռնությամբ մեկնարկած «Անմեղ նահատակի հիշատակին» շարժման շրջանակներում է: Շարժման նպատակն է մինչ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը Հայաստանի ողջ տարածքում տնկել 1,5 մլն ծառ: «Սա համախմբող նշանակություն ունի մեր ժողովրդի համար: Անչափ կարեւոր կլինի, որ յուրաքանչյուր հայ իր մեկ ծառը տնկելով մասնակից լինի այս նախաձեռնությանը: Հասկանշական է նաեւ երիտասարդության այսքան բարձր մակարդակի մասնակցությունը: Վստահ եմ, որ նրանք հետագայում հիշելու են այս օրը եւ այս օրով՝ մեր ժողովրդի պատմությունը, նրա միասնական լինելը: Ինձ ուրախացնում են նաեւ երիտասարդների ջանասիրությունն ու ուրախ տրամադրությունը, քանի որ ամեն մի գործում պետք է ներդնես հոգիդ, որպեսզի գործն այդ հաջողություն ունենա», այս տարի իր առաջին ծառը տնկելով՝ ասաց Արա Աբրահամյանը: Ի դեպ, ՀՀԿ եւ ՌՀՄ նախագահը, ծնված լինելով գյուղացու ընտանիքում, իր իսկ խոսքերով, 5 տարեկանից ծառ է տնկում. «Ամեն տարի մենք Մոսկվայում շուրջ 1000 ծառ ենք տնկում, եւ այսօր Հայաստանում այս տարվա առաջին ծառատունկին եմ մասնակցում», նշեց Աբրահամյանը:

Տես էջ 2

# Ջերմոցային պայմաններ Էրդողանի համար

ԵԽԽՎ ապրիլի 11-15-ի նստաշրջանում թեեւ Հայաստանին վերաբերող օրակարգային հարց չկար, բայց տարբեր առիթներով Հայաստանի անունը հնչեց: ԵԽԽՎ-ում մեր պատվիրակության անդամները երեկ պատմեցին ինչն` ինչպես: Պատվիրակության ղեկավար **Դավիթ Հարությունյանը** կարեւոր համարեց, որ նստաշրջանի ընթացքում ԼՂՀ հարցով ենթահանձնաժողովի նիստ տեղի չի ունեցել, թեեւ նա առանձին հանդիպում է ունեցել ենթահանձնաժողովի նախագահ Ջորջի Ջուկլա Կոստայի հետ: Հայկական տեսակետը հայտնի է` այդպիսի ենթահանձնաժողովի գործունեությունն աննպատակահարմար է: Երկրորդ հարցը մոնիտորինգի հանձնաժողովում Հայաստանի հարցի քննարկումն էր, այս փուլում դեռեւս քննարկումները գաղտնապահական են, ուստի մանրամասներ այդ մասին չներկայացրեց, միայն նշեց, որ ընդհանուր առմամբ համազեկուցողների` Հայաստան այցից հետո եւ մոնիտորինգի հանձնաժողովի նիստից հետո հայտարարություններում մոտեցումները նույնն են: Հայտարարության համեմատաբար կոշտ մասի համաձայն` 2008-ի մարտի 1-ի դեպքերին առնչվող մարդկանց ձերբակալությունը, 10 զոհերի մահվան պատճառների չբացահայտումը շարունակում են թունավորել Հայաստանի քաղաքական միջավայրը եւ բացասական ազդեցություն կարող են թողնել 2012-ի խորհրդարանական ընտրությունների վրա: Մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցողներ Աքսել Ֆիշերն ու Ջոն Պրեսկոտը հայտարարությամբ են հանդես եկել ապրիլի 15-ին, որտեղ Հայաստանի իշխանություններին կոչ էին արել ընտրությունների հետ կապված եւ դատական ու ոստիկանական համակարգերում բարեփոխումների առումով խոսքից գործի անցնել: Բայց այս բոլորից ոչինչ գաղտնիք չէ, ըստ Դ. Հարությունյանի, քայլեր արվում են, պատշաճ ընտրություններ անցկացնելու անհրաժեշտությունը ոչ ոք չի ժխտում եւ ոչ էլ` բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը. ամենօրյա տքնաջան աշխատանք է կատարվում, որքան էլ լրագրողները սենսացիաներ փնտրեն: Իսկ բանաձեւի կատարումը բխում է Հայաստանի շահերից, այդ ուղղությամբ էլ մերոնք աշխատում են: Որ արվողը բավարար չէ, ինչպես համազեկուցողներն են գտնում, ինքն էլ է այդ կարծիքի, դրա համար էլ աշխատում են: Ենթադրաբար` Հայաստանի հարցը քննարկման առարկա կդառնա մյուս նստաշրջանում, աշնանը:

Եղել է նաեւ եւս մեկ հարցի քննարկում մոնիտորինգի հանձնաժողովում` մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համարբերգի զեկույցի հետ կապված, այն դեռեւս սեւագիր տարբերակով է, եւ ներկայացված է` մեկնաբանություններ ստանալու ակնկալիքով գործադիր իշխանությունից: Մեկնաբանությունները Համարբերգը կստանա եւ հրապարակային կդարձնի իր զեկույցը հավանաբար մայիսին:

Նաիրա Զոհրաբյանը նորից ի մի բերեց այն ամենը, ինչի մասին նաեւ մանրամասներ էր փոխանցել «Ազգը»: Ադրբեջանցի պատվիրակներն իրենց մոտ տասը ելույթներում իննամյա երեխայի մահվան, ռազմագերիների եւ Ստեփանակերտի օդանավակայանի հարցերն էին դարձրել թիրախ` հայկական կողմին իրենց հայտնի եւ ստահոդ մեղադրանքներն ու սպառնալիքներն ուղղելով: Ն. Զոհրաբյանն իր ելույթներում պատասխանել է ադրբեջանական պատվիրակության ելույթներին, հայկական տեսակետը հնչեցրել, դիմել ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Համարբերգին` վկայակոչելով ադրբեջանցի բարձր պաշտոնյաների բազմակի հայտարարությունները, որ իրենք կռմբակոծեն Ստեփանակերտ թռչող բոլոր քաղաքացիական ինքնաթիռները: Ի դեպ, այդ մտահոգությունը կիսել է նաեւ Համարբերգը: Էրդողանի ելույթին հերթագրված լինելու եւ հարց ուղղելուց զրկվելու պատմությունը եւս Ն. Զոհրաբյանը ներկայացրեց, (տես «**Ազգի**» ապրիլի 15-ի համարում)` որպես եզրակացություն մեկնաբանելով, թե Չավուշօղլուն, զբաղեցնելով ԵԽԽՎ-ի նախագահի պաշտոնը, առաջնորդվում է ոչ թե ԵԽ հիմնարար արժեքներով, այլ այդ պաշտոնում թուրք-ադրբեջանական լոբբինգով զբաղվելով: Այսինքն` նա ոչ թե ԵԽԽՎ նախագահ է, այլ թուրք գործիչ: Ն. Զոհրաբյանը պատրաստվում է դիմել նաեւ կանոնակարգային հանձնաժողով` շահերի բախման ինստիտուտի շրջանակում, քանզի Չավուշօղլուն իր երկրի վարչապետի համար ջերմոցային պայմաններ է ստեղծել` նրան ապահովագրելով հայկական պատվիրակության անդամների հարցերից: Մեր տեղեկացմանը, թե երեկ Չավուշօղլուն Անթալիայում ասել է` հայ պատվիրակները սխալ տեղեկատվություն են տարածում եւ զբաղվում մանիպուլյացիայով, ի պատասխան Ն. Զոհրաբյանը կրկնեց պատմությունը, ասելով, որ միայն Արմեն Ռուստամյանն է հարց տալու իրավունք ունեցել:

«Ազգի» հարցին, թե Էրդողանը Հայաստանի եւ սփյուռքի ուղղությամբ տարբեր հայտարարություններ արեց, որոնց ԵԽԽՎ ֆորմատով հնարավոր չէր պատասխանել, ինչպե՞ս պետք է դրանց պատասխանել, Դ. Հարությունյանը նկատեց, որ այստեղ եւս ոչ մի անակնկալ չկար` թուրքերի ոճն է բացահայտվում. Էրդողանի ոճը բացահայտվել է ոչ միայն հայ, այլեւ ֆրանսիացի պատվիրակին պատասխանելիս, իսկ այդ ոճը օբյեկտիվ մարդկանց մեջ որոշակի տպավորություն է ստեղծում, թե ի՞նչ երկրի եւ ի՞նչ գաղափարախոսության հետ մենք գործ ունենք: Ն. Զոհրաբյանն էլ հավելեց, որ իր համար ակնհայտ էր, որ Դավութօղլուի եւ Էրդողանի այդ կարգի պատասխաններն էին լինելու, սակայն կարեւոր էր, որ ԵԽԽՎ բազմաթիվ եվրոպացի պատգամավորների ներկայությամբ Զոհրաբյանը հանձնել է ցեղասպանության ենթարկված երեխաների նկարները եւ ասել այն, ինչ ուզում էր ասել:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Չավուշօղլուն չարաշահեց իր դիրքերը

**Նույն ժամին, երբ ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավարն ու մյուս անդամները ԱԺ-ում ամփոփում էին պատվիրակության աշխատանքները, «Հայացք» մամուլի ակումբում ԵԽԽՎ գարնանային նստաշրջանն էր ամփոփում նույն պատվիրակության անդամ Զարուհի Փոստանջյանը:**

**Ամփոփելով նստաշրջանի արդյունքները` Փոստանջյանն ասաց, որ ԼՂ հարցով զբաղվող ենթահանձնաժողովը փաստացի չի գործել. քանի որ հանձնաժողովի նախագահը երկու օր հետո մեկնել է: «Չավուշօղլուի միջոցներով եւ ակտիվ գործունեությամբ ստեղծված ենթահանձնաժողովը դեռ չգիտե` ինչպիսի ապագա քայլեր մշակեն, երեւի որոշեցին գործունեությունը հետաձգել», ասաց Փոստանջյանը` հավելելով, որ սա միակ արդյունավետությունն էր ողջ նստաշրջանի ընթացքում:**



**ԱԺ պատգամավորը հավելում է, որ ԵԽԽՎ-ում զգուշանում են ԼՂ հարցի մասին խոսելիս. ադրբեջանցիների հարցերին ԵԽԽՎ գլխավոր քարտուղարն ու մարդու իրավունքների հանձնակատարը ձեռնպահ են մնում. Խնդիրը դիտարկվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի իրավասության ներքո: Սա եվրոպացի պաշտոնյաների տեսակետն է: Անդրադառնալով Զարուհի Փոստանջյանի եւ Նաիրա Զոհրաբյանի` Թուրքիայի վարչապետ Էրդողանին հարցեր ուղղելու հնարավորությունից զրկելուն, Փոստանջյանն ասաց, որ ԵԽԽՎ ազգությամբ թուրք նախագահն ուղղակի չարաշահել է իր դիրքերը: Հայկական պատվիրակության հարցում-նամակին ի պատասխան ասել են, որ հարց տալու հերթականության խախտումը կանոնակարգի շրջանակներում էր:**

**Որ Չավուշօղլուն իր պաշտոնական դիրքն օգտագործում է ընդդեմ հայերի Փոստանջյանը մեղադրում է նաեւ հայկական պատվիրակության մնացած անդամներին. «Երբ անցյալ տարի նախաձեռնեցի Չավուշօղլուի դեմ փաստաթուղթ, որով հայկական կողմը պետք է դեմ արտահայտվեր Չավուշօղլուի նախագահությանը, հայկական պատվիրակության մնացած անդամները չմիացան: Ավելին, նրանք ինձ փոխարինող կազմում էին գցել: Այսօր հայկական պատվիրակության անդամները կրում են նման գործունեության հետեւանքները»:** Հ. Հ.

# Մանկապարտեզները քաղաքապետի վերահսկողության տակ

Դավթաշենի վարչական շրջանի աշխատակազմի ստուգումներով համայնքի մի շարք մանկապարտեզներում արձանագրվել էին թերություններ եւ խախտումներ. համայնքում գործող 4 մանկապարտեզների տնօրեններ խիստ նկատողություն էին ստացել:

Երեկ Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը պահանջել է վերահսկողություն եւ խիստ վերաբերմունք կիրառել բոլոր այն մանկապարտեզների նկատմամբ, որտեղ կգրանցվեն հավելագրումների դեպքեր ու երեխաների համար սննդի կազմակերպման խնդիրներ:

Վերահսկողությունը շարունակելու պահանջ է դրվել նաեւ վարձակալության պայմանագրեր կնքած այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր չեն ապահովում իրենց տարածքների հարակից հատվածների բարեկարգման եւ կանաչապատման համար սահմանված պարտադիր նորմն ու պայմանագրային պարտավորությունները:

Վարչական շրջանների ղեկավարներին հանձնարարվել է ամենօրյա հսկողություն իրականացնել այգիներում, պուրակներում:

Հ. Հ.

### ՇԱՐԱՏՈՒՆԿ

# «Բնության եւ հոգու էկոլոգիա»

*1-ին էջից*

**Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի փոխտնօրեն Թովմաս Թովմասյանը նշեց, որ իրենց այգում կան արդեն մի քանի ծառատեսակների պուրակներ, եւ նոր` սոսիների պուրակի ստեղծումը խիստ կարեւոր է նաեւ էկոլոգիական տեսանկյունից: Էկոլոգիայի կարեւորության մասին խոսեց նաեւ ծառատունկին մասնակից, Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը. «Այս նախաձեռնությունը մեզ համար և՛ բնության, և՛ հոգու էկոլոգիա է», ընդգծեց Անանյանը:**



**Ծիծեռնակաբերդի բարձունքի փեշին տնկված 300 սոսիները արդեն գոյություն ունեն: Նրանցից յուրաքանչյուրը խորհրդանշում է նահատակված մեկ հայի, որին հիշում, հիշատակին խոնարհվում է այսօրվա երիտասարդ հայը: Դրանցից յուրաքանչյուրը մեկ տոկոսով առնվազն լուծում է «անապատացող» Հաաստանի էկոլոգիական խնդիրները, ամեն տնկած ծառով հայ մարդը էլ ավելի է կապվում բնությանը, հասարակական գործունեության մեջ ներառվում: Ու ամենեւին էլ պատահական չէ, որ հեռանալիս ծառատունկին մասնակից գրեթե բոլոր երիտասարդները ուշադրությամբ հետեւում էին ճանապարհին` պուրակի տեղը ճիշտ հիշելու համար: Մեր առանձին զրույցներում նրանցից շատերը խոստովանեցին, որ անպայման հաճախ այցելելու են` տեսնելու իրենց տնկած սոսիների պուրակը: Իսկ մինչ այդ պուրակի մշակումը հանձն առավ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտը. փոխտնօրեն Թովմասյանը վստահեցրեց, որ պուրակը երբեք անմշակ չի մնա: Երբ հեռանում էինք, նորատունկ սոսիներն արդեն սկսեցին ջրվել:**

# Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Րաֆֆի Հովհաննիսյանը հանդիպել են

**Կարեն Դեմիրճյանի ծննդյան 79-ամյակի առթիվ հարգանքի տուրք մատուցելու համար ապրիլի 17-ին Կոմիտասի անվան պանթեոն այցելած ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու «Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը հանդիպել են եւ զրուցել, ընդ որում` Ր. Հովհաննիսյանն է մոտեցել Տեր-Պետրոսյանին: Զրույցի մանրամասների մասին երեկ տեղեկություններ չկային, անգամ զույգ գործիչների կուսակիցները տեղյակ չէին դրանցից:** Մ. Խ.

# Ուխտագնացություն դեպի Օձուն

**Կիրակի օրը Գուգարաց թեմի «Նարեկացի» եկեղեցասեր երիտասարդաց միությունը Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի առաջնորդությամբ ուխտագնացություն էր կազմակերպել դեպի Հովհաննես Օձնեցի հայրապետի շիրմին: Երիտասարդներն Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցում նաեւ մասնակցել են պատարագի: Ուխտագնացությունը կազմակերպվել էր Հովհան Օձնեցի կաթողիկոսի մահվան 1283-ամյակի առիթով: Այս տարի հայրապետի մահվան օրը համընկել էր Ծաղկազարդի օրվան:** Ի. Պ.

# Ապրիլի 21-22-ի գիշերը` ասուպային հոսք

**Սպասվում է Լիրիդների ասուպային հոսքի առավելագույն փուլը, որը կդիտվի ապրիլի 21-22-ի գիշերվա երկրորդ կեսին Քնարի (Լիրայի) համաստեղության ուղղությամբ (Կարապի համաստեղության հարեւանությամբ), երկնքի ամենապայծառ աստղերից մեկի` Վեգայի մոտ: Այդ տիրույթում է գտնվում ասուպային հոսքի կենտրոնը, որն աստղագիտության մեջ կոչվում է ռադիանտ: Լիրիդների հոսքն արդեն սկսվել է եւ ընդհանուր առմամբ տեւում է 10 օր` ապրիլի 16-26-ը, սակայն ապրիլի 21-22 գիշերը միայն դրանք ուժեղ արտահայտված կլինեն` հոսքի ինտենսիվությունը մաքսիմումում կհասնի ժամում 10 ասուպի: Լիրիդների դիտումները սկսվել են դեռեւս 2600 տարի առաջ, ինչն ամենահինն է բոլոր ասուպային հոսքերի մեջ: Լիրիդները ժամանակ առ ժամանակ բռնկում են` հասնելով ժամում մինչեւ 100 ասուպի, ինչի պատճառները հայտնի չեն: Հիշեցնենք, որ ասուպային հոսքերն առաջանում են, երբ Երկիրը, Արեգակի շուրջն իր ուղեծրով շարժվելով, հանդիպում է երկնաքարերի խմբի, եւ վերջիններս` թափանցելով Երկրի մթնոլորտ, այրվում են եւ ընկնող աստղեր հիշեցնող հետքեր թողնում: Սովորաբար երկնաքարերի չափերը շատ փոքր են, նրանք ամբողջովին այրվում են` չհասնելով Երկրի մակերեւույթին, միայն հազվագյուտ դեպքերում է որեւէ երկնաքար ընկնում Երկրի վրա, ինչը կարող է տեղական աղետ առաջացնել: Տարվա ընթացքում դիտվում է շուրջ 20 ասուպային հոսք, որոնցից հատկապես ինտենսիվ են Քվադրանտիդները, Պերսեիդները, Լեոնիդները եւ Գեմինիդները:**

Աստղագետ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ո՞վքե՞ր են «հոկտեմբերի 27»-ի կազմակերպիչները

*Ազգային անվտանգության սպայի վերլուծությունը*

**«Ես Հայաստանի ազգային անվտանգության համակարգի սպա եմ, արդեն 5 տարի՝ նախկին սպա, չնայած մենք «նախկին» չենք լինում: Այժմ ես ապրում եմ Եվրոպայում եւ ներկայացնեմ իմ վերլուծությունը՝ հիմնված իմ սեփական տեղեկությունների վրա՝ Հայաստանում տեղի ունեցած որոշ իրադարձությունների կապակցությամբ», այս տողերով է սկսվում համացանցային louyswordl.com էջում հրապարակված վերլուծությունը՝ «Ո՞վ կազմակերպեց հոկտեմբերի 27-ը», խորագրով: Վերլուծությունը ապրիլի 16-ի համարում հրապարակեց «Գոլոս Արմենիի» պարբերականը:**

Սպան հիշում է, որ երբ ինքը աշխատում էր Իսրայելում, իրենց տեղեկացրել էին, որ «ոմն Լեւոն Տեր-Պետրոսյան Հայաստանից, կնոջ եւ անչափահաս որդու հետ դիմել է Իսրայել՝ այնտեղ բնակություն հաստատելու խնդրանքով: Չնայած նրա կինը՝ Լյուդմիլա Տեր-Պետրոսյանը Լենինգրադի հրեական համայնքի անդամ էր, իսկ նրա մոր քեռին՝ Ռուսաստանի հրեական համայնքի ղեկավարը, Տեր-Պետրոսյանի այս խնդրանքը մի քանի անգամ մերժվել էր: Լեւոն Տեր-Պետրոսյանի առջեւ նախապայման էր դրված՝ կամ պետք է համագործակցի պետական անվտանգության հետ, կամ նա պետք է ունենար խնդիրներ. Տեր-Պետրոսյանը որոշեց համագործակցել: Անցան տարիներ, եւ 1988-ին մենք նորից լսեցինք Լեւոն Տեր-Պետրոսյանի անունը, որ նա մասնակցում էր հանրահավաքներին: 1988-ի ամռանը ես գործուղման մեջ էի Հայաստան: Հերթական հանրահավաքներից մեկից հետո, երբ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները սուրճ էին խմում մոտակա սրճարաններից մեկում, ես նրանց մեջ ճանաչեցի մեկին, որը Թել Ավիվում մեր դեսպանատան անվտանգության աշխատակիցներից էր, բնականաբար՝ «Մոսսադ»-ի գործակալ: Այս ամենից հետեւաբար՝ Հայաստանում այդ տարիներին աշխատում էր «Մոսսադը», նրանք ցանկանում էին, որ ժողովրդին ղեկավարի Լեւոն Տեր-Պետրոսյանը: Ընդ որում՝ հրեաներն ունեին հեռահար նպատակներ. տարածաշրջան բերել «Բրիթիշ Փեթրոլիում»-ին: Հրեաներին պետք չէին լրացուցիչ խոչընդոտներ նավթի ճանապարհին, այդ իսկ պատճառով նրանք անում էին հնարավոր ամեն բան, որպեսզի Հայաստանում իշխանության գա Լեւոն Տեր-Պետրոսյանը: Արդեն 1994-ին անգլիացիները ստորագրեցին կոնսորցիում, որը ադրբեջանցիներին մեծ շահույթ էր խոստանում, եթե նավթատարը կառուցվեր: Սակայն այս ճանապարհին անհրաժեշտ էր շուտափույթ լուծել ղարաբաղյան հիմնահարցը: Հենց այս հարցում էլ որոշիչ դեր պետք է խաղար Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նավթատարի շինարարության համար անհրաժեշտ էր 7-8 տարի, Լեւոն Տեր-Պետրոսյանին ոչ ոք չէր շտապեցնում, սակայն 1996-ին կայացած նախագահական ընտրություններում առաջացան լուրջ խնդիրներ: Պահանջվեց շուրջ մեկ տարի, որպեսզի վերընտրված Տեր-Պետրոսյանը նորից անհրաժեշտ ուժ հավաքի, սակայն ի հայս եկավ նոր խնդիր: 1998-ի սկզբին Հայաստանում Վազգեն Սարգսյանն ու Ռոբերտ Քոչարյանն իրականացրին պետական հեղաշրջում: Հենց այդ ժամանակ «նավթային արքաները» հասկացան, որ հարցը հեշտությամբ չի լուծվի: Ռոբերտ Քոչարյանը նախագահն էր, եւ ակնհայտ էր, որ նրան այդ պաշտոնում փոխարինելու է Վազգեն Սարգսյանը: Միեւնույն ժամանակ՝ անիմաստ էր սպանել Քոչարյանին, քանի որ իրական ուժը գալիս էր Վազգեն Սարգսյանից, որին նավթային մագնատները հենց այդ ուժի համար դատապարտեցին մահվան: Առանց Վազգեն Սարգսյանի շատ ավելի դյուրին կլիներ շարքից հանել նաեւ Ռոբերտ Քոչարյանին: Այստեղ հատկանշական է նկատել, որ «Մոսսադը» սխալվեց՝ հույսը դնելով Տեր-Պետրոսյանի վրա, վերջինս էլ՝ Վանոյի, Վանոն էլ՝ իր բանդայի ղեկավար Տեր-Սահակյանի: Հատկանշական է, որ նախքան 1998-ի հունվարի հեղաշրջումը Տեր-Սահակյանը հայտարարեց, որ շուտով իրենք կլուծեն «Վազգենի հարցը»: Նույնը օրը նա ձերբակալվեց: Վանո Սիրադեղյանը պատգամավորական անձեռնմխելիություն ուներ, եւ նրան ձերբակալելու համար պետք էր խորհրդարանի թույլտվությունը: Հենց այդ ժամանակ էլ Վանոն հայտարարեց, որ «շուտով Վազգենից կմնա միայն կամուֆլյաժը»: Վազգեն Սարգսյանի «չեզոքացումը» հանձնարարված էր Նաիրի Հունանյանին, որը ամենեւին էլ նրանց համար «անծանոթ մեկը» չէր: Դեռեւս 1999-ի հոկտեմբերի 27-ից մի քանի տարի առաջ Հունանյանը ընդունվել էր նախագահի աշխատակազմ՝ մամուլի քարտուղար Լեւոն Զուրաբյանի եւ խորհրդական Վահագն Խաչատրյանի միջնորդությամբ: Իսկ «ինչպես սպանել», Հունանյանը «սովորել» էր Թուրքիայում: Հունանյանը սերտ կապեր ուներ «Չորրորդ իշխանություն» թերթի խմբագիր Շողեր Մաթեւոսյանի եւ ՀՀՇ վարչության անդամ Արմեն Մանուկյանի հետ: Հատկանշական է, որ Սիրադեղյանն իր համար «պահեստային տարբերակ» էր մշակել հոկտեմբերի 27-ին, եթե պլանը ձախողվեր: Նա սպանությունից հետո այցելեց ֆրանսիական դեսպանատուն, ասաց, որ իրականացնողները դաշնակներ են, որ հավանաբար նաեւ իրեն պետք է սպանեն եւ խնդրեց քաղաքական ապաստան, սակայն ֆրանսիացիները մերժեցին:

Ինչո՞ւ ընտրվեց հենց հոկտեմբերի 27-ը, քանի որ հենց այդ օրերին ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյա Սթրոբ Թելբոտը բանակցություններ էր վարում Երեւանում ղարաբաղյան հիմնահարցով: Հոկտեմբերի 27-ի կազմակերպիչները կանխատեսել էին, որ սա լավ առիթ է հետքննությունը այլ՝ սխալ ուղղությամբ տանելու, քանի որ պարզ էր, որ Վազգեն Սարգսյանը օժտված է ռուսական քաղաքական եւ ռազմական վերնախավի աջակցությամբ: Ինչեւէ, հոկտեմբերի 27-ի երեկոյան ՊՆ-ում տեղի ունեցավ բազմամարդ խորհրդակցություն: Բացի սպայական բարձրաստիճան կազմից, Սարգսյանի ընկերներից, այս խորհրդակցությանը մասնակցում էր նաեւ Վանո Սիրադեղյանը: Խորհրդակցության ժամանակ Վահան Շիրխանյանը հանեց մի գրություն, որը ՀՀ նոր կառավարության կազմն էր, որտեղ Շիրխանյանին տրված էր վարչապետի պաշտոնը: Բոլոր ներկաների համար այս գրությունը անակնկալ էր, միայն ՀՀՇ-ի ղեկավարությունը «ամենամտերիմներին» էր հայտնել ահաբեկչական ակցիայի մանրուքները: Բանն այն է, որ հիշյալ ակցիայի կարեւորագույն մասը սկսվելու էր գիշերը՝ 1-ից հետո: Հենց այդ ժամանակ Սիրադեղյանը եւ Շիրխանյանը պետք է համոզեին գեներալներին, որ անհրաժեշտ է գրոհով հետ գրավել ԱԺ դահլիճը՝ սպանելով Հունանյանին ու նրա խմբի անդամներին: Բացի սրանից՝ Վազգեն Սարգսյանի հուղարկավորության հաջորդ օրը, Քոչարյանը, բանակի գեներալների ճնշման ներքո, պետք է հրաժարական տար...: Պլանը չիրականացավ զուտ այն պատճառով, որ Քոչարյանը բավական խելամիտ գտնվեց. նա հասկացավ, թե ինչո՞ւ է պահանջվում գրոհով վերցնել ԱԺ դահլիճը՝ սպանելով Հունանյանի խմբի բոլոր անդամներին: Քոչարյանը կարողացավ այնպես անել, որ գրոհը տեղի չունենա, եւ Հունանյանը մնա ողջ»: Եզրակացնելով՝ սպան ընդգծում է. «Այսպիսին է Հայաստանի պատմության ամենախոշոր հանցագործության՝ «հոկտեմբերի 27-ի» պատմությունը, որը միակ նպատակ պետք է իրագործեր. վերադարձնել իշխանության Լեւոն Տեր-Պետրոսյանին, որպեսզի նա իրականացնի հրեաների նավթային ծրագրերը»:

Հ. Ա.

***Խմբ. կողմից.-* Եթե այս վերլուծությունները իրոք ճշմարտացի են, ապա, կարծում ենք, այստեղ պետք է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը համապատասխան արձագանք ցուցաբերի, մանավանդ որ վերլուծողը ներկայացել է որպես «ազգային անվտանգության նախկին սպա»:**

# Լեւոն Տեր-Պետրոսյանը BBC-ին պատմել է Ղարաբաղի մասին

«Ղարաբաղյան հակամարտության կարգավորումն առավել մոտ է եղել 1997-ին, քանի որ հնարավորություն կար լուծելու այն՝ որոշ տարածքներ հանձնելով Ադրբեջանին, կնքել հաշտություն, ստեղծել Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ, հետագայում որոշելու պայմանով»: Այդ մասին BBC-ի ռուսական ծառայությանը տված հարցազրույցում հայտարարել է Հայաստանի առաջին նախագահ, Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ պատասխանելով հարցին, թե ե՞րբ է առավելագույնս մոտ եղել հակամարտության կարգավորումը: Հարցին, թե ինչո՞ւ դա տեղի չի ունեցել, Հայաստանի առաջին նախագահն ասել է. «Քանի որ ղարաբաղցիները կարծում էին, որ դա քիչ է: Մոտեցումը մաքսիմալիստական էր: Նրանք կարծում էին, որ կարելի է էլի ապրել եւ ստանալ ավելին: Այսինքն, ոչ միայն ղարաբաղցիները, այլեւ իմ շրջապատը, իմ թիմի որոշ անդամներ: Նրանք չգնացին այդ ծրագրին: Ես իրենց ասացի՝ եթե կարծում եք, որ կա ավելի լավ լուծում, խնդրեմ, փորձեք: Ես չեմ կարող ձախողել այդ լուծումը: Փորձեք, տեսեք, թե ինչ կստացվի...»: Հարցին, պատկերացնո՞ւմ էին արդյոք Հայաստանում, թե ինչի կհանգեցնի Ղարաբաղի համար շարժումը, երբ սկսում էին, Տեր-Պետրոսյանն ասել է. «Ոչ, չէինք պատկերացնում: Երբ մենք սկսում էինք 1988-ին, որեւէ մեկը չէր էլ կարող պատկերացնել, որ Խորհրդային Միությունը կփլուզվի: Մենք ելնում էինք նրանից, որ կա ԽՍՀՄ, կա սահմանադրություն, եւ այդ սահմանադրության շրջանակներում մեզ թույլ էր տրված բարձրացնել հարց՝ դուրս բերել Ղարաբաղը Ադրբեջանի կազմից եւ ընդգրկել Հայաստանի կազմում: Նման նախադեպեր եղել են: Կարակալպակները մի քանի անգամ Ուզբեկստանից անցել են Ղազախստանին... Ղրիմը եւ այլն... Բայց դրա փոխարեն, փոխանակ ուշադիր քննարկի հարցը՝ խորհրդային ղեկավարությունը գնաց բախումների ճանապարհով: Նրանք զորքեր մտցրին, պարետային ժամ: Իհարկե, դրանից հետո գործընթացն ավելի արմատական դարձավ»:

«Ես լավատես եմ, վստահ եմ, որ ամեն ինչ լավ կլինի, նորմալ երկիր կլինի», հայտարարել է Հայաստանի առաջին նախագահը՝ պատասխանելով հարցին, թե ինչպիսի՞ն է տեսնում Հայաստանը 20 տարի անց: Նրա խոսքով, Հայաստանն այսօր մեկ խնդիր ունի, «աղավաղված իշխանությունը»: «Եթե Հայաստանին հաջողվի հաղթահարել այդ խնդիրը, կլինի «նորմալ, ազատ երկիր: Ե՛վ Ադրբեջանի հետ հարցերը, ե՛ւ Թուրքիայի հետ հարցերը կլուծվեն: Եթե Հայաստանը հայտնվի աղետի առջեւ, դա կլինի բացառապես մեր մեղքը», ամփոփել է Տեր-Պետրոսյանը:

Հ. Ա.

ՎՐԱՍՏԱՆ

# Ջավախահայությունը կոչ է անում ԱՄՆ իշխանություններին՝ առավել անաչառ լինել

**ԱՄՆ պետքարտուղարության՝ մարդու իրավունքների մասին հրապարակած վերջին զեկույցի Վրաստանին վերաբերող մասում, ըստ Ջավախահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհրդի, կրկին փաստերը ներկայացված են խիստ թերի եւ խեղաթյուրված: Զեկույցում մասնավորապես արտացոլված չեն ջավախահայության իրավունքների ոտնահարման հետեւյալ փաստերը. «Ջավախահայության հասարակական-քաղաքական կյանքը շարունակվում է գտնվել վրաց ուժային կառույցների վերահսկողության ներքո: Հայաբնակ շրջաններում, հատկապես Սամցխե-Ջավախքում, «Ազգային շարժում» կուսակցության, կեղծվեցին 2010-ի մայիսին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքները: Վրաստանի օրենսդրությամբ՝ արգելվում է ստեղծել քաղաքական կազմակերպություններ տարածաշրջանային հիմքի վրա: Վրացական իշխանությունները արագացված տեմպերով շարունակում են հայ բնակչություն ունեցող շրջաններում վրացերեն լեզվի բռնի պարտադրման քաղաքականության իրականացումը՝ արհամարհելով հայերեն լեզվին մարզային կարգավիճակ տալու ջավախահայության հորդորները: Սամցխե-Ջավախք նահանգում հայերն, ըստ պաշտոնական տվյալների, կազմում են բնակչության 55 տոկոսը, սակայն գրեթե ներկայացված չեն նահանգի կառավարման մարմիններում»: Միեւնույն ժամանակ՝ Ջավախահայերի իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը նշում է, որ զեկույցում արդարացիորեն նշված է, որ իրենք բողոքում են հայերենը մարզային լեզվի կարգավիճակ տալու վրաց իշխանության դժկամությունից: Վահագն Չախալյանի գործի վերաբերյալ խորհուրդը դրական շարժ է գնահատում, որ ամերիկյան զեկույցում զետեղված են նաեւ հայկական կողմի ներկայացրած ծանրակշիռ փաստերը, ըստ որոնց՝ Չախալյանը բանտարկվել է ջավախահայության իրավունքների պաշտպանությանն ուղղված իր գործունեության պատճառով: Այդուհանդերձ՝ խորհուրդն արձանագրում է, որ Վրաստանի պարագայում ԱՄՆ-ը շարունակում է բանեցնել երկակի ստանդարտներ՝ խուսափելով համարժեք գնահատականներ տալ ինչ-ինչ երեւույթներին, դրանով իսկ, արտոնելով Սաակաշվիլու վարչակարգին՝ շարունակել իր խտրական քաղաքականությունը: Ելնելով այս ամենից՝ Ջավախահայերի իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը կոչ է անում ԱՄՆ իշխանություններին՝ իրենց զեկույցներում առավել անաչառ ներկայացնել Վրաստանի հայ բնակչության խնդիրները, ինչպես նաեւ, առհասարակ, ազգային փոքրամասնությունների վերաբերյալ Վրաստանի ստանձնած միջազգային պարտականությունների կատարման ընթացքը:**

Հ. Ա.

# Երեւանում է Վրաստանի պաշտպանության նախարարը



**Վրաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավար Բաչո Ախալայան պաշտոնական այցով Հայաստանում է նախարար Սեյրան Օհանյանի հրավերով: Երեկ երկու նախարարների առանձնազրույցին հետեւել է երկու երկրների ՊՆ-ների պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը, որից հետո նախարարները հանդես են եկել համատեղ ասուլիսում: Նախարար Օհանյանը մասնավորապես նշել է. «Հայ-վրացական ռազմական համագործակցությունը արդյունավետ զարգանում է՝ ընդգրկելով խաղաղապահության, ռազմակրթության, ռազմական վարժանքների եւ այլ ոլորտներ: Այդ համագործակցությունը նպատակ ունի ապահովել փոքրի փոխանակում եւ ձեւավորել փոխվստահության մթնոլորտ՝ տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրների խաղաղ կարգավորման շուրջը»: Հատկանշական է, որ Հայաստանն ու Վրաստանը միակարծիք են եղել, որ .տարածաշրջանային բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն բացառապես խաղաղ ճանապարհով»: Նախարար Ախալայան, ընդգծել է, որ առկա են բոլոր անհրաժեշտ հիմքերը՝ «հայ-վրացական ռազմական համագործակցության հետագա զարգացման համար»: Երեկ Վրաստանի պաշտպանության նախարարն այցելեց նաեւ Ծիծեռնակաբերդ, ինչպես նաեւ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ:**

**- Պարոն Քոթանջյան, Դուք քաղաքագիտության առաջին հայ դոկտորը դարձաք վերակառուցման ժամանակ ԽՍՀՄ-ի եւ ապա ՌԴ-ի ԲՈՀ-ի ցանկում «Քաղաքական գործընթացներ եւ ինստիտուտներ» մասնագիտության ընդգրկումից հետո, ինչպես նաեւ վերապատրաստվեցիք Եվրոպայի եւ ԱՄՆ-ի անվտանգային-քաղաքագիտական հեղինակավոր կենտրոններում: Պատմեցեք, խնդրեմ, Հայաստանում վերջերս գրանցված Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի եւ դրանում Ձեր դերի մասին:**

- Ասոցիացիայի հիմնադիրները Հայաստանի առաջատար քաղաքագետներն են, որոնք հիմնականում Ռուսաստանի, Ամերիկայի եւ Եվրոպայի առավել առաջադեմ քաղաքագիտական դպրոցների հետ գիտական համագործակցության փորձ ունեն: Իմ գործընկերների համար, որոնց մեջ գերակշռում են երիտասարդ սերնդի մասնագետները, այժմեական է պրոֆեսիոնալ քաղաքագիտական միջավայրի եւ ինքնագործ քաղաքական մեկնաբանների գործունեության ոլորտի սահմանազատումը:

Ըստ այդմ, կազմակերպության կանոնադրության մեջ հիմնական նպատակ է հռչակված օժանդակությունը հայկական քաղաքագիտության գիտական հիմքերի եւ ավանդույթների ձեւավորմանը, քաղաքագիտական կրթության եւ ուսուցման զարգացմանը, քաղաքագետների գործունեության մասնագիտական եւ բարոյագիտական նորմերի արմատավորմանը, քաղաքագիտության փորձագիտական ներուժի զարգացմանը, ինչպես նաեւ արտերկրի համանման կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցության ընդլայնմանը:

Ես նախագահում եմ ասոցիացիայի խորհրդի նիստերում, ըստ ամերիկյան չափանիշների՝ խորհրդի չեյրմենն եմ (ատենապետ): Գործադիր տնօրեն է ընտրված ԱՄՆ Թաֆտսի համալսարանի դիվանագիտության Ֆլետչերի դպրոցի շրջանավարտ, գիտությունների երիտասարդ թեկնածու Բենիամին Պողոսյանը:

**- Հայ ազգային կոնգրեսի վերջին հանրահավաքում դրա առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ ՀԱԿ գործողությունները կծավալվեն այնպես, որ բացառվի Հայաստանում ներքին անկայունության հրահրումը, որպեսզի Ադրբեջանին հնարավորություն չտրվի դրանից օգտվելով նոր պատերազմ սանձազերծել: Որպես պրոֆեսիոնալ քաղաքագետ եւ քաղաքական գիտության ասոցիացիայի նախագահ՝ ինչպե՞ս եք վերաբերվում տվյալ հայտարարությանը:**

- Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունն արժանի է Հայաստանի Հանրապետության առաջին նախագահի բարձր կոչմանը եւ հասարակական կարգավիճակին: Այն արտացոլում է Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ համաշխարհային հայության ազգային անվտանգության շահերի անվիճարկելի գերակայության հարցում իշխող ընտրախավի եւ ընդդիմադիր հակընտրախավերի միջեւ համաձայնության ձեւավորման հնարավորությունը:

Իմ կարծիքով, Հայաստանի Հանրապետության ռազմավարական գերակայությունների հիման վրա երկխոսություն կառուցելու հնարավորությունը լիովին արտահայտում է ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանի դիրքորոշումը, որը առաջնակարգ կարեւորություն է տալիս հայ ժողովրդի անվտանգության շահերին:

**- Դուք ինչպե՞ս կգնահատեիք Հայաստանի առաջին նախագահի գործունեությունն անցյալում:**

- Ոչ միանշանակ:

Նոր անկախ հայկական պետականության հիմքերի ստեղծման գործում առաջին նախագահի ծառայություններն անվիճելի են: Նրա օրոք Ղարաբաղի ազգային ազատագրական շարժման առաջնորդներ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի հետ համագործակցությամբ ընդհանուր քաղաքական հաղթանակ ձեռք բերվեց Լեռնային Ղարաբաղում օրինապաշտ հանրաքվեի անցկացման եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման գործում: Նրա օրոք ստեղծվեցին Հայաստանի Հանրապետության զինված ուժերը: Ղարաբաղի ռազմաճակատներում ռազմական հաղթանակը նույնպես ձեռք բերվեց Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահության ժամանակ:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել ազգային-պետական շինարարության մեջ առաջին նախագահի թույլ տված լուրջ սխալները, որոնք Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի տնտեսական, սոցիալական եւ քաղաքական կյանքի այսօրվա դժվարությունների հիմքը դարձան: Դրանք կուսակցությունների միջեւ հավասարակշիռ համազգային երկխոսության հաստատման գործում թույլ տրված սխալներն են: ՀՅԴ-ի հետապնդումը եւ դրա ղեկավարների ձերբակալությունը, Սփյուռքի մյուս հեղինակավոր ուժի՝ Ռամկավար ազատական կուսակցության թուլացման փորձերը եւ մի շարք համանման քայլեր ազգային պետականության կազմավորման փուլում Հայաստանի սկզբնավորվող քաղաքական մշակույթում հակամարտության տարրեր մտցրին, ինչն արտահայտվում է Հայաստանի եւ աշխարհասփյուռ հայության քաղաքականության հիմնական սուբյեկտների փոխհարաբերություններում:

**- Ձեր կարծիքով, որո՞նք են Հայաստանի հասարակությունում սոցիալական բարձր լարվածության պատճառները:**

- Անկախացումից հետո Հայաստանի տնտեսությունը ժամանակին չվերակողմնորոշվեց դեպի համագործակցության մերձավորարեւելյան տարածաշրջանի երկրների հետ, մի տարածաշրջանի, որը եղել է եւ ներկայումս էլ մնում է շուկա ԽՍՀՄ պաշտպանական-արդյունաբերական համալիրի եւ նրա ժառանգորդ՝ Ռուսաստանի արդիականացված պաշտպանական արդյունաբերության արտադրանքի իրացման համար, մինչդեռ Հայաստանի՝ այդ տարիներին մասամբ թալանված ճշգրիտ մեքենաշինության համալիրը եւ այդ շրջանում զգալի չափով թուլացած գիտատեխնիկական հանրությունը եղել էին այդ համալիրի մի մասը:

Պետական իշխանության մասնագիտական անհրազեկության հետեւանքով Խորհրդային Հայաստանի արտադրական կարողությունների փլուզումը, իշխանական կառույցներում ժողովրդավարության ամբոխավարական իմիտացիայի քողի տակ առկա չարաշահումներն ու կաշառակերությունը հանգեցրին զանգվածային գործազրկության, սոցիալ-մասնագիտական կառուցվածքի աղետալի փոխակերպմանը եւ հայ հասարակության բեւեռացմանը, մասնագետների արտագաղթին, բիզնեսի մենաշնորհացմանը եւ օլիգարխացմանը, ինչպես նաեւ դժվարությունների՝ տնտեսության կայուն զարգացման, աշխատատեղերի համակարգի պլանավորման, մասնագետների պատրաստման եւ աշխատանքի տեղավորման ոլորտներում:

Վերջին հաշվով, անցյալի եւ ներկայի հենց նման սխալներով ու չարաշահումներով է պայմանավորված Հայաստանի հասարակության մեջ առկա սոցիալական լարվածությունը:

**- Դուք ինչպե՞ս եք վերաբերվում «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանի վերջերս հայտարարած հացադուլին:**

- Րաֆֆին Հայոց Սփյուռքի առավել կրթված եւ հայրենասեր ներկայացուցիչներից է, որը Հայաստանում քաղաքական գործունեության ռիսկերը նախընտրեց ԱՄՆ-ում կանխատեսելի մասնագիտական կարիերայից:

Դրա հետ մեկտեղ հարկ է նշել Րաֆֆի Հովհաննիսյանի քաղաքական քայլի ոչ հակամարտային, բարեկիրթ բնույթը, որը տեղավորվում է մարդու քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների բնագավառի միջազգային նորմերի, մեր ազգային պետության հիմնական օրենքում արտացոլված իրավունքների եւ ազատությունների համակարգում: Որպես քաղաքագետ ես հիմքեր չունեմ վիճարկելու նրա կողմից քաղաքական պայքարի ոչ բռնի միջոցների ընտրությունը հանուն Հայաստանում ժողովրդավարության եւ առաջադիմական զարգացման:

**- Ի՞նչ կասեիք քաղաքականությունում շախմատ խաղալու Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջարկի մասին:**

# «Հայաստանի գործող եւ առաջին նախագահները քաղաքականության մեջ նախընտրում են շախմատը»

*Մեր զրուցակիցն է Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի (ՔԳՀԱ) նախագահ, քաղաքագիտության դոկտոր (ՌԴ) Հայկ Սարգսի Քոթանջյանը*

տական դպրոցների հետ գիտական համագործակցության փորձ ունեն: Իմ գործընկերների համար, որոնց մեջ գերակշռում են երիտասարդ սերնդի մասնագետները, այժմեական է պրոֆեսիոնալ քաղաքագիտական միջավայրի եւ ինքնագործ քաղաքական մեկնաբանների գործունեության ոլորտի սահմանազատումը:

Հայեցակարգային առումով սահմանափակ խորհրդային կենսակերպի բոլոր թերություններով հանդերձ, Հայաստանն առաջատար դիրքեր էր զբաղեցնում ճշգրիտ մեքենաշինության եւ էլեկտրոնիկայի մի շարք ճյուղերում, այդ թվում՝ ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրում: Տեխնիկապես ու տեխնոլոգիապես առաջատար տնտեսությանը համապատասխանում էր Հայաստանի հասարակության սոցիալ-մասնագիտական զարգացած կառուցվածքը: Այս առումով հատկանշական է այն փաստը, որ 1980-ականներին Հայաստանը 1000 մարդուն ընկնող բարձրագույն որակավորման մասնագետների՝ գիտությունների դոկտորների ու թեկնածուների տեսակարար կշռով առաջին տեղն էր զբաղեցնում ԽՍՀՄ հանրապետությունների մեջ:

Մինչդեռ, առաջին նախագահի իշխանության տարիներին, որը մի շարք երիտասարդ, ձիրքաշատ անհատներից բացի պետության կառավարմանը մասնակից դարձրեց բազմաթիվ պատահական քրեական պորտուլիստների, տնտեսության եւ սոցիալական քաղաքականության բարեփոխման սկզբունքային սխալների պատճառով Հայաստանն սկսեց վերածվել այնպիսի պետության, որի տնտեսության մեջ փաստորեն դադարեց գործել գիտատար արդյունաբերությունը: Այստեղ անհրաժեշտ է վերապահություն անել եւ մատնանշել ԽՍՀՄ լուծարումից հետո արտադրության տեխնոլոգիապես առաջադեմ ճյուղերի անկման որոշ օբյեկտիվ պատճառների գոյությունը հետխորհրդային ողջ տարածքում: Օրինակ՝ մատակարարումների շղթայի խզումը, Մոսկվայի դոտացիոն աջակցության դադարեցումը, 1980-ականներին համակարգչային համակարգերի դանդաղ ներդրման պատճառով արդյունաբերության որոշ ոլորտների ցածր մրցունակությունը եւ այլն:

Սակայն սեփականաշնորհման ռազմավարության ու մարտավարության մեջ թույլ տված սխալները, ինչպես նաեւ նախկին խորհրդային հանրապետություններում գործընկերների հետ շփումների անհեռատես սառեցումը այդ ժամանակաշրջանում դարձան բարձր տեխնոլոգիական տնտեսության փլուզման եւ ազգային անվտանգության ռեսուրսների փոշիացման անհամեմատ ավելի կարեւոր գործոններ: Սեփականաշնորհմանը մասնակից դարձան պատահական մարդիկ, որոնք հաճախ շահագրգռված էին միայն ձեռքբերված արտադրական ակտիվները որպես մետաղի ջարդոն վաճառելով: Մասնավորեցման մյուս կարեւոր վրիպումը դարձավ սակավահող Հայաստանի պայմաններում գյուղատնտեսության սխալ բարեփոխումը, որի հետեւանքով տեղի ունեցավ հողային ֆոնդի եւ մեքենայացման միջոցների անարդյունավետ տրոհում՝ ճյուղի հետագա աստիճանական անկմամբ: Տվյալ գործընթացները խորացան Ադրբեջանի կողմից Ղարաբաղում եւ Հայաստանի սահմանների երկայնքով պարտադրած պատերազմի եւ հաղորդակցության ուղիների շրջափակման փորձի պատճառով:

Իշխանության եկած Հայոց համազգային շարժման սխալների մեջ, իմ կարծիքով, առանձնահատուկ տեղ էին գրավում Հայաստանի եւ Սփյուռքի առավել ազդեցիկ շահագրգիռ խմբերի (groups of interests) եւ քաղաքական կուսակցությունների միջեւ հավասարակշիռ համազգային երկխոսության հաստատման գործում թույլ տրված սխալները:



- Անշուշտ, դա քաղաքական նախասիրությունների պատկերավոր արտահայտություն է: Իմ կարծիքով, այստեղ արժե վերհիշել արդիական քաղաքական ռազմավարության ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Սըր Ուինստոն Չերչիլի քաղաքագիտական առումով անթերի ասույթը. «Պետական այրերին հուզում է գալիք սերնդի ճակատագիրը: Քաղաքական գործիչներին հուզում է գալիք ընտրությունների արդյունքը»:

Կարեւոր է, որ իշխանությունները եւ ընդդիմությունը (տվյալ դեպքում ի դեմս գործող եւ առաջին նախագահների) առանձին-առանձին հրապարակավ արտահայտվեցին իրենց գլխավորած ուժերի ռազմավարական շահերից մեկի համընկնելու մասին: Խոսքը առանց Հայաստանի ներքաղաքական կայունության՝ մեր ազգային անվտանգության գլխավոր գերակայություններից մեկի խախտման սպառնալիքի քաղաքական պայքարը շարունակելու կարեւորության մասին է: Այս իմաստով երկու առաջնորդների քաղաքականության մեջ շախմատը խորհրդանշում է ռազմավարության եւ երկարաժամկետ ազգային շահերի գերակայությունը մարտավարության եւ իրավիճակային անսկզբունք քաղաքականության նկատմամբ:

Քաղաքական գործընթացի բոլոր մասնակիցների միջեւ նշմարվող երկխոսության զարգացման դեպքում մեր ազգային քաղաքական մշակույթի հարստացման շահերի տեսակետից ազգային անվտանգության ռազմավարական գերակայություններից մեկը կարող էր համարվել պաշտոնաթող նախագահների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում կարեւոր եւ պատվավոր դերերի կատարումն օրինականացնելու հնարավորությունը՝ աշխարհի շատ պետությունների դրական փորձի ստեղծագործաբար իմաստավորմամբ:

**- Ինչպե՞ս կբնութագրեիք ազգային անվտանգության համար պատասխանատու երկխոսություն սկսելու Հայաստանի նախագահների կոչը:**

- Ելնելով համազգային երկխոսությանը եւ համախմբմանը ուղղված կոչից, որպես մեր պետության ազգային անվտանգության գերակայություններն արտահայտող ռազմավարական նպատակ կարելի է հռչակել հետեւյալ հիմնարար սկզբունքը. «Հայաստանը իրավունք չունի պարտվելու եւ ոչ մի պատերազմում»:

Այս սկզբունքը միավորում է աշխարհի հայությանը եւ առանձնակի հրատապություն է ստանում պատերազմը վերսկսելու Ադրբեջանի սպառնալիքների կապակցությամբ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին, ոճիր, որի մեջ Օսմանյան կայսրության հետ մեկտեղ որոշակի դերակատարություն է ունեցել նաեւ 1918թ. ինքնահռչակված Ադրբեջանը:

Համազգային անվտանգության տվյալ սկզբունքը կարող է հիմք դառնալ ռազմավարական կոնսենսուսի հասնելու համար՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի եւ Սփյուռքի հավաքական հզորության ցանցային համախմբմամբ:

**Ռուս. թարգմ.**
**Պ.Ք.**

# Այսպես են «պահում կայունությունը»

Անցած կիրակի Բաքվում ընդդիմության բողոքի ակցիան դարձյալ խափանվել է: Ոստիկանությունը ձերբակալել է, ըստ պաշտոնական հաղորդագրության, 63 անձի: Շուրջ երկու տասնյակ մարդ նույն օրն ազատ է արձակվել: Մյուսների «գործերն ուղարկվել են դատարաններ»: Այդ մասին ասված է ոստիկանության Բաքու քաղաքի գլխավոր վարչության եւ դատախազության համատեղ հայտարարության մեջ:

Բնութագրական է, որ ապրիլի 15-ին ընդդիմության առաջնորդներ Ալիֆ Քերիմլին եւ Իսա Ղամբարը «հրավիրվել են» ոստիկանություն: Նրանք հարցաքննվել են որպես «ապրիլի 2-ին Բաքու քաղաքում հասարակական կարգի կոպիտ խախտման փաստով հարուցված քրեական գործում ներգրավված վկաներ»: Հարցաքննությունը տեւել է 6,5 ժամ:



Ֆազիլ Աղամալին հորդորում է «սպանել ցուցարարներին»:

Նույն օրը կառավարող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Հասանովը հանդես է եկել «մեկնաբանություններով»: Դրանք գերազանցում են փարիսեցիության նույնիսկ ադրբեջանական չափանիշները:

Այսպես, Հասանովը գտնում է, որ «սահմանադրությունն, այո, երաշխավորում է ցույցեր եւ հանրահավաքներ անցկացնելու քաղաքացիների իրավունքը, բայց կա նաեւ քաղաքացիների հանգստի իրավունք»: Ընդդիմությունը, նրա կարծիքով, փորձում է «խախտել հազարավոր մարդկանց հանգստի իրավունքը, երբ պահանջում է թույլ տալ բողոքի ակցիա անցկացնել «Սահիլ» զբոսայգում, որը մեծ գումարներ ծախսելով վերաբացվել է, որպեսզի մարդիկ այնտեղ հանգստանան»:

Հասանովի «մտքի թռիչքն ուղղակի հրաշքներ է գործում», երբ նա անցնում է բուն ասելիքին: Նա գտնում է, որ ընդդիմությունն իր բողոքի ակցիան պետք է անցկացնի այնտեղ, որտեղ «կկարողանա հավաքել համակիրներ»: Հակառակ դեպքում, ըստ կառավարող կուսակցության գործադիր քարտուղարի, ստացվում է այնպես, որ «գալով մարդաշատ վայրեր, ընդդիմությունը կարող է տպավորություն ստեղծել, թե հանգստացողները նույնպես համաձայն են իրենց տեսակետներին»:

Ոչինչ չես ասի. Հասանովն ընդդիմությանն առաջարկում է ցույց կամ հանրահավաք անցկացնել անմարդաբնակ վայրերում՝ նախապես այնտեղ բերելով իր համակիրներին:

Ամբողջ խնդիրը, սակայն, այն է, որ ընդդիմությունը նույնիսկ մայրաքաղաքի կենտրոնում է զրկված տեղաշարժի իրավունքից: Ինչպե՞ս կարող է նա համակիրներ հավաքել եւ տեղափոխել իշխանությունների նախանշած անմարդաբնակ տարածք, եթե ոստիկանությունը նույնիսկ երեք հոգու միեւնույն տեղում գտնվելու դեպքում է ուժ գործադրում:



«Սահիլ» զբոսայգուն հարող փողոցները ոստիկանության կողմից շրջափակված են:

Իսկ որ այդպես է, վկայում են «Սահիլ» զբոսայգում եւ նրան հարող փողոցներում ապրիլի 17-ին «Թուրան» գործակալության լրագրողի արած լուսանկարները:

Ի դեպ, լրագրողը հասցրել է «հավերժացնել» նաեւ կառավարող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Հասանովին, որն իր գրասենյակի պատշգամբից գոհունակության ժպիտով դիտում է, թե ինչպես են ոստիկանները մարդկանց մուտքն արգելափակում:

Ավելի անցանկալի վիճակում է հայտնվել «ընդդիմադիր» պատգամավոր Ֆազիլ Աղամալին: Նա եւս գտնվել է կառավարող կուսակցության գրասենյակում եւ, դուրս գալով պատշգամբ, մատի խորհրդանշական շարժումով ոստիկաններին հորդորել է «սպանել ցուցարարներին»՝ ինչպես պատգամավորի ժեստը մեկնաբանել է «Պոլիգոն» կայքի թղթակիցը:

Այդօրինակ «կայունությունը», սակայն, թվացյալ է: Ինչպես գրում է նույն «Պոլիգոն»-ը, Ադրբեջանում «հեղափոխության սցենարի հեղինակները եւս մի քայլ են կատարել»: Ըստ այդմ, «Վրաստանի նախագահի մերձավոր շրջապատից հայտնի է դարձել, որ Թբիլիսի են ժամանում արեւմտյան մի շարք հեղինակավոր կենտրոնների ներկայացուցիչներ: Նրանք Վրաստանում կգտնվեն որպես նախագահ Սաակաշվիլիի անձնական հյուրեր: Նախատեսված է, որ նրանց հետ հանդիպելու համար Թբիլիսի կմեկնեն կամ ընդդիմության առաջնորդները կամ նրանց հատուկ ներկայացուցիչները»:

Հիշյալ տեղեկատվության իսկությունը «Պոլիգոն» վերլուծական կայքը հիմնավորում է այն իրողությամբ, որ եվրոպական շուրջ երկու տասնյակ երկրների դեսպաններ «Մուսավաթ» կուսակցության գրասենյակում «փակ հանդիպում են անցկացրել ընդդիմության առաջնորդների հետ եւ, չնայած իշխանության պնդումներին, այդ մասին որեւէ տեղեկատվություն չեն փոխանցում ոչ ԱԳՆ-ին, ոչ նախագահի աշխատակազմին»:

«Պոլիգոն»-ի աղբյուրները նաեւ հավաստիացրել են, որ Ադրբեջանի Ազգային անվտանգության երկարամյա փոխնախարարի, որը ծնունդով Նախիջեւանից է եւ մինչ այդ համարվել է իշխող կլանի ամենահավատարիմ մարդկանցից մեկը, անսպասելի պաշտոնանկությունը պայմանավորված է ընդդիմության եւ եվրոպական երկրների դեսպանների շփումները վերահսկելու մասին «անձամբ Իլհամ Ալիեւից ստացած հանձնարարականը չկատարելու հանգամանքով»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ֆրանս-իտալական վեճ աֆրիկացիների պատճառով

Ֆրանսիան հրաժարվում է մարդատար գնացքներ ընդունել Իտալիայից եւ փակել է սահմանային երկաթգիծը, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Ֆրանսիացիները վախենում են աֆրիկացի փախստականների ներհոսքից, որոնք վերջերս զանգվածաբար մուտք են գործում իտալական Լամպեդուզա կղզի:

Երկաթուղային հաղորդակցությունը փակված է իտալական սահմանամերձ Վենտիմիլյա քաղաքի հետ: Ֆրանսիական երկաթգծի աշխատակիցներից մեկի խոսքերով, որոշումն ընդունել են Իտալիային սահմանակից Ալպ Մարիտիմ դեպարտամենտի իշխանությունները:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ երկաթուղային հաղորդակցությունը ժամանակավորապես ընդհատված է անվտանգության նկատառումներով: Վենտիմիլյայում անցկացվում են բողոքի ելույթներ, որոնց մասնակցում են փախստականներին պաշտպանող ինչպես ֆրանսիացի, այնպես էլ իտալացի ակտիվիստներ: Այդ քաղաքում նաեւ Ֆրանսիա մուտք գործելու հնարավորությանն են սպասում վեց տասնյակ աֆրիկացիներ:

Իտալիայի ԱԳՆ-ն բողոքի նոտա է հղել ֆրանսիական կողմին՝ վերջինիս մեղադրելով Եվրամիության հիմնարար սկզբունքների խախտման մեջ: Ապրիլի սկզբներին Իտալիայի իշխանությունները որոշել էին Աֆրիկայից (հիմնականում Թունիսից) եկող փախստականներին Եվրոպայում 6 ամիս տեղաշարժվելու ժամանակավոր իրավունք տալ: Սակայն Ֆրանսիան եւ Գերմանիան դեմ են այդ որոշմանը:

ԱՂԵՏ

# «Ֆուկուշիմա-1»-ում դիմել են ռոբոտների օգնությանը

**Ճապոնացի մասնագետները ռոբոտների օգնությանն են դիմել «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի վթարը վերացնելու նպատակով: NHK հեռուստաալիքը հաղորդում է, որ թրթուրավոր ռոբոտները ռադիացիոն նմուշներ են վերցրել ԱԷԿ-ի առաջին եւ երրորդ ռեակտորներում:**

**Հեռակառավարվող ռոբոտները վթարված էներգաբլոկների շենքերում գործում են ապրիլի 17-ից: Ռոբոտները մասնավորապես փորձանմուշներ են վերցրել առաջին եւ երրորդ ռեակտորների ստորին հարկերում: Առաջին ռեակտորում ճառագայթային ֆոնը կազմում է ժամում 10-49 միլիզիվերտ, երրորդում՝ 28-57 միլիզիվերտ:**

**Ստացված տվյալները թույլ կտան մշակել գործողությունների ծրագիր: Ճարտարագետները մասնավորապես փորձում են պարզել, թե երբ հնարավոր կլինի մարդկանց ուղարկել վնասված ռեակտորներ՝ վթարի հետեւանքները վերացնելու: Ապրիլի 18-ին ռոբոտները համապատասխան փորձանմուշներ են վերցրել երկրորդ ռեակտորից:**

**Ներկայումս ռեակտորներում ճառագայթման մակարդակը այնքան բարձր է, որ հնարավոր չէ մասնագետների այնտեղ ուղարկել, ընդգծում է ատոմակայանի օպերատոր TEPCO ընկերությունը: Սակայն Ճապոնիայի միջուկային անվտանգության գործակալությունում պնդում են, որ վնասված էներգաբլոկներում մարդկանց կարճատեւ աշխատանքը հնարավոր է: Ճապոնացի պաշտոնյաները խոստանում են ատոմակայանի «սառը կանգնեցման» նախնական ծրագիրը իրականացնել 6-9 ամսվա ընթացքում, նշում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**TEPCO ընկերությունում մասնավորապես հույս ունեն առաջիկա ամիսներին վերացնել ճառագայթման արտահոսքերը, վերականգնել ռեակտորների եւ բանեցված վառելիքի ավազանների կայուն հովացումը, ինչպես նաեւ ատոմակայանը փոխադրել «սառը կանգնեցման» վիճակի: Դրանից հետո մերձակա բնակավայրերից տարհանված մարդիկ կկարողանան տուն վերադառնալ:**

# WikiLeaks. ԱՄՆ-ը ֆինանսավորել է Սիրիայի ընդդիմությանը

*Հուզումները շարունակվում են*

WikiLeaks կայքում հրապարակված դիվանագիտական հեռագրերը վկայում են, որ ԱՄՆ պետդեպարտամենտը գաղտնաբար աջակցել է Սիրիայի ընդդիմությանը եւ միջոցներ փոխանցել 2009-ին հեռարձակումներ սկսած ընդդիմադիր Barada TV հեռուստաալիքին:

Փաստաթղթերի համաձայն, ընդդիմության ֆինանսավորումը սկսվել է այն բանից հետո, երբ 2005-ին նախագահ Ջորջ Բուշը Դամասկոսից հետ կանչեց ԱՄՆ դեսպանին: Օբամայի վարչակազմը շարունակել է նույնը գիծը: «Վաշինգտոն փոստ» թերթը ապրիլի 18-ին հաղորդեց, որ 2006-ից մինչեւ 2010-ի աշուն պետդեպարտամենտը ընդդիմադիր «Արդարության եւ զարգացման շարժմանը» փոխանցել է 6 մլն դոլար:

2009-ին Դամասկոսում ամերիկացի դիվանագետները նշել էին, որ Սիրիայի հատուկ ծառայությունները սկսել են ավելի շատ հետաքրքրվել ընդդիմության հետ Վաշինգտոնի կապերով: Դիվանագետները պետդեպարտամենտին խորհուրդ էին տվել վերանայել այդ կապերը, որպեսզի խոչընդոտ չծագի Բաշար Ասադի վարչակարգի հետ Օբամայի հարաբերությունների վերականգնման ճանապարհին:

Հայտնի է, որ առնվազն մինչեւ 2010-ի սեպտեմբեր պետդեպարտամենտը աջակցել է Սիրիայի ընդդիմությանը:

Վերջին ամիսներին Սիրիայում տեղի են ունենում բողոքի ցույցեր, բախումներ ոստիկանների եւ զինվորների հետ: Իրավապաշտպան կազմակերպությունների տվյալներով, սպանվածների թիվն անցնում է 200-ից: Սիրիայի իշխանությունները բռնարարքների համար մեղադրում են «օտարերկրյա վարձկաններին»:

Երեկ Դամասկոսից 160 կմ հյուսիս՝ Հոմսի նահանգում զինված գրոհայինները հարձակվել են ոստիկանների եւ զինվորների վրա: Վիրավորվել են 12 ոստիկան (նրանցից մեկը մահացել է) եւ 5 զինվոր: Տեղ հասած հատուկ ջոկատին հաջողվել է սպանել 3 եւ վիրավորել 15 գրոհայինների: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Լաթաքիա նավահանգստային քաղաքում վարչակարգի 10 հազար հակառակորդներ կազմակերպել են ջահերթ, պահանջելով ազատ արձակել քաղբանտարկյալներին: Համանման ցույց տեղի է ունեցել երկրի հարավում՝ Դերաա քաղաքում: Այդ մասին հայտնել են իրավապաշտպանները: Մարդու իրավունքների սիրիական ընկերակցության տվյալներով, Հոմս քաղաքի կենտրոնական հրապարակում խաղաղ ցույցի ցրմանը մասնակցել են հարյուրավոր իրավապահներ: Կան սպանվածներ եւ վիրավորներ:

# Ռաուլ Կաստրո. «Սահմանափակել կառավարման ժամկետը եւ վերացնել պարենային քարտը»

**Կուբայի նախագահ Ռաուլ Կաստրոն առաջարկել է իր եւ մյուս բարձրաստիճան պաշտոնյաների կառավարման ժամկետը սահմանափակել 10 տարով, որպեսզի հնարավոր լինի «երիտասարդացնել» երկրի քաղաքական ընտրախավը: Առաջարկությունն արվել է Հավանայում անցկացվող Կոմկուսի 6-րդ համագումարում: 1959-ի հեղափոխությունից ի վեր նման առաջարկություն չէր արվել, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**Կաստրոն իր ելույթում նաեւ առաջարկել է վերացնել պարենային քարտերը, ապակենտրոնացնել տնտեսությունը, օրինականացնել տների եւ ավտոմեքենաների վաճառքը, իրականացնել մի շարք ուրիշ բարեփոխումներ:**

**79-ամյա Ռաուլ Կաստրոն նախագահի պաշտոնը զբաղեցնում է 2008-ից՝ իր ավագ եղբայր Ֆիդելի ծանր հիվանդության կապակցությամբ: Ներկայիս օրենքները Ռաուլին թույլ են տալիս պաշտոնում մնալ առնվազն մինչեւ 2018 թվականը:**

**Նախագահն ընդգծել է, որ Կուբան անչափ երկար անտեսել է սեփական խնդիրները, եւ որ հանուն երկրի գոյատեւման կառավարությունը պարտավոր է ընդունել դժվարին որոշումներ:**

**Համագումարի 1000 պատգամավորները պետք է ընդունեն մասնավորապես սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր: Ռոյթերը նշում է, որ ծրագիրը հիմք կդառնա Ռաուլ Կաստրոյի առաջարկած շուկայական բարեփոխումների համար, որոնց նպատակը սոցիալիստական համակարգի փրկությունն է:**

**Բացի դրանից, համագումարում պետք է ընտրվեն կուսակցության նոր ղեկավարներ:**

# Մշակույթ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

## 11 անուն նոր գրքեր՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի տարելիցին

Ապրիլի 20-ին՝ ժամը 13:30-ին, ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (ԵՊՀ կենտրոնական մասնաշենք, 5-րդ հարկ) տեղի կունենա ԵՊՀ հրատարակչության կողմից վերջին մեկ տարվա ընթացքում հրատարակված Հայոց ցեղասպանության թեման արծարծող միանգամից 11 անուն գրքերի շնորհանդես:

Շնորհանդեսին կներկայացվեն Գոնսալո Հ. Գուարչի «Հայոց կտակ», Ստեփան Պողոսյանի «Հայոց ցեղասպանության պատմություն» (1-3-րդ հատորներ), Հրաչիկ Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներով», Վահան Բայբուրդյանի «Օսմանյան կայսրության պատմություն», Ստյոպա Պետոյանի «Թուրքերը թուրքերի մասին» (1-ին հատոր), Ստեփան Պողոսյանի «Թուրքերը թուրքերի մասին» (2-րդ հատոր), Վարուժան Պողոսյանի «Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության եւ հասարակական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ)», Դորա Սաքայանի «Զմյուռնիա 1922, բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը» (հայերեն եւ անգլերեն), Ռաֆիկ Նահապետյանի «Աղձնիքահայերի՝ մանկան խնամքի ավանդական սովորույթներն ու ծեսերը», Վիլհելմ Բաումի «Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները» գրքերը:

Հրավիրված են Կառավարության ներկայացուցիչներ, գիտնականներ եւ մտավորականներ ոչ միայն համալսարանից: Թարգմանիչներն ու հեղինակներն իրենց մակագրությամբ գրքեր կնվիրեն ներկաներին:

ՄԱՆԵ ՄԱԴՈՅԱՆ

## Համերգն անցավ ակնկալվող հաջողությամբ

Ապրիլի 16-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի եւ թավջութակահար, Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի առաջին մրցանակակիր Նարեկ Հախնազարյանի համերգը: Համերգի առաջին բաժնում հնչեց Ա. Դվորժակ՝ կոնցերտ թավջութակի եւ նվագախմբի համար, անդադար ծափահարություններից հետո, Նարեկ Հախնազարյանը կատարեց բիս՝ Բախի 6-րդ սյուիտի՝ «Սառաբանդան»: Երկրորդ բաժնում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի կատարմամբ հնչեց Պ. Չայկովսկու թիվ 5 սիմֆոնիան, որից հետո էլ նվագախումբը կատարեց բիս՝ Պիետրո Մասկանիի «Cavalleria Rusticana» օպերայից՝ ինտերմեցցոն: Համերգն անցավ մեծ հաջողությամբ՝ երաժշտասեր հասարակության հուշերում թողնելով վառ տպավորություններ եւ հաճելի ակնթարթներ:



## Նոր նամականիշներ՝ նվիրված Յուրի Գագարինին եւ Անդրանիկ Իոսիֆյանին



Ապրիլի 18-ին ժամը 13.30-ին Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ճեմասրահում՝ «Մարդը եւ տիեզերքը» հանրապետական ֆիլատելիստական ցուցահանդեսի անցկացման վայրում, տեղի ունեցավ տիեզերագնացությանը նվիրված երկու նամականիշների մարման պաշտոնական արարողությունը: Նամականիշներից մեկը նվիրված էր Յուրի Գագարինի տիեզերք կատարած թռիչքի 50 - ամյակին, մյուսը՝ օդերեւութաբանական արբանյակների գլխավոր կոնստրուկտոր Անդրանիկ Իոսիֆյանին:

Արարողությունն իրականացրեցին ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի տեղակալ Վալտեր Մարությանը, Ռուսաստանի տիեզերական գործակալության ղեկավարի տեղակալ Սերգեյ Սավելեւը, Հայփոստ ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն Արման Խաչատուրյանը եւ Հայաստանի Ֆիլատելիստների միության նախագահ Հովիկ Մուսայելյանը: Վերջիններս ողջունեցին եւ շնորհավորեցին ներկաներին՝ իրենց խոսքի մեջ տիեզերագնացության եւ Յուրի Գագարինի՝ դեպի տիեզերք կատարած թռիչքի 50-ամյակին նվիրված միջոցառումների շարքում հայկական նամականիշների թողարկման կարեւորությունը:

Նամականիշների տեխնիկական հատկանիշներն են՝

12.04.1961 Յուրի Գագարինի տիեզերք կատարած թռիչքի 50-ամյակը
Նամականիշ
Տպարանը՝ Lowe Martin Group (Կանադա)
Նամականիշի չափը՝ 40,0 x 24,5 մմ
Մեկ թերթի վրա՝ 10 (2x5)
Անվանագինը՝ 350 դրամ
Տպաքանակը՝ 40 000
հեղինակ՝ Հ. Սամուելյան

Անդրանիկ Իոսիֆյան 1905-1993, օդերեւութաբանական արբանյակների գլխավոր կոնստրուկտոր
Նամականիշ
Տպարանը՝ Lowe Martin Group (Կանադա)
Նամականիշի չափը 24,5x40,0 մմ
Մեկ թերթի վրա՝ 10 (5x2)
Անվանագինը՝ 200 դրամ
Տպաքանակը՝ 40 000
հեղինակ՝ Հ. Սամուելյան

«Հայփոստ» ՓԲԸ

## «Վահան Թեքեյան» ամենամյա մրցանակաբաշխությունը՝ յուրահատուկ կամուրջ Սփյուռքի եւ հայրենիքի միջեւ

*1-ին էջից*

Հայտերը 120 էին, հաղթողները՝ 10:

Նկարիչների միության նախագահ **Կարեն Աղամյանի** ստեղծագործական կյանքում Ցեղասպանության թեմային նվիրված կտավները առանձնահատուկ տեղ են գրավում: «Գաղթ» գեղանկարը ստեղծել է անցյալ տարի՝ ցեղասպանության 95-րդ տարելիցին. «Գաղթում» մահվանը զուգահեռ ներկայացրել եմ նաեւ կյանքը: Այն մարդիկ, ովքեր փրկվեցին եւ հաստատվեցին Հայաստանում, իրենց հետ բերեցին անցյալը, իրենց եսը: Ոչ միայն ողբ ու լաց, այլեւ վերածնունդ ու կյանք է արտացոլված կտավում, որը փաստում է. հայերը շարունակելի կենսագրություն ունեցող ազգ են», նշում է գեղանկարչության անվանակարգում այս տարվա մրցանակակիր Կարեն Աղամյանը:

Նկարչի «Գաղթ» կտավը Գեղանկարչության անվանակարգի հաղթողն է:

Գրականագետ **Սելիտա Դոլուխանյանի** մեկնաբանությամբ՝ **Գուրգեն Խանջյանի** «Նամակներ ընթացքից» էսսեների ժողովածուն առանձնանում է հոգեբանական նուրբ վերլուծությամբ: Ստեղծագործությունների հիմքում մարդն է, նրա ապրումներն ու հույզերը: «Գեղարվեստական գրականության» անվանակարգի հաղթող Խանջյանը նշում է, որ 43 նամակից բաղկացած «Նամակներ ընթացքից» ժողովածուում ժամանակակից մարդը խորհում է Աստծո, հավատքի ու երկնային անսահմանության մասին:

«Սոցիալ-քաղաքական երգիծանքն այսօր վերածվել է «խուտուտի», որը անընդունելի է: КВН-ի հետնորդներն ուղղակի սպականում են մեր երգիծանքն ու հումորը»: Սա դերասան **Միքայել Պողոսյանի** գնահատականն է: Այսօր ժանրը ուշադրության կարիք ունի, որովհետեւ այն պատշաճ մակարդակով չի ցուցադրվում

2005-ին «Սոցիալ-քաղաքական երգիծանք» անվանակարգում Պողոսյանն արժանացել է Հոլանդիայում «Պրինց Կլաուսի» մրցանակին: Միջազգային ժյուրին 2005-ը հայտարարել էր երգիծանքի եւ հումորի տարի: Մասնակից 80 երկրներից հայ դերասանն արժանացավ գլխավոր մրցանակին: «Ոչ պակաս պատվաբեր է «Վահան Թեքեյան» մրցանակը, հատկապես երբ թերթում եմ այս 10 տարվա ընթացքում մրցանակին արժանացածների ցանկը, շատ մեծ պատիվ է նրանց կողքին հայտնվելը», ասում է Պողոսյանը: Հանդիսատեսի գնահատականն ու ընկալումն էլ այնքան բարձր է, որ դերասանն իրեն վստահ է զգում փողոցում քայլելիս:

«Միքայել Պողոսյանը կոմիկ չէ, նա փիլիսոփա է: Դերասան, որ կոմիկականության մեջ ողբերգականությունն է ներկայացնում. Դրանում է նրա բացառիկությունը», ասաց «**Ազգ**» օրաթերթի խմբագիր **Հակոբ Ավետիքյանը**՝ հավելելով, որ վերոնշյալ մրցանակի նվիրատուն **Իրմա Տեր-Ստեփանյանն** է. Նյու-Յորքից՝ ի հիշատակ իր հոր՝ երգիծանքի հայտնի վարպետ Միհրան Տեր-Ստեփանյանի հիշատակին:

«Մանկապատանեկան մշակույթի բնագավառում ստեղծագործությունները տարեցտարի սակավանում են», մտահոգություն է հայտնում «Փոքրիկ երգիչներ» երգչախմբի դիրիժոր **Տիգրան Հեքեքյանը**: Վերջին մոհիկաններից է մանկագիր **Սուրեն Մուրադյանը**, ում «Մանկական երգարան եւ մանկական պիեսներ»-ը լավագույնն էին «Արա Մարալ» մանկապատանեկան ստեղծագործությունների անվանակարգում, որը հաստատել է Նյու Յորքից մանկապատանեկան շատ գործերի հեղինակ Սիլվա Տեր-Ստեփանյանը:

Մանկագիր Սուրեն Մուրադյանի 95 ժողովածուից 50-ը ուղղված է մանուկներին: Մանուկների համար ստեղծագործելու համար Մուրադյանն առաջնային է համարում բարությունն ու զարմանալու հատկությունը. «Եթե երեխայի նման չկարողանաս զարմանալ, չես կարող ստեղծագործել», ասում է մանկագիրն ու խոստովանում, որ արդեն պատկառելի տարիքում ոչ միայն հեքիաթ է գրում, այլեւ հաճույքով կարդում: Այժմ նրա ամենահավատարիմ ունկնդիր-ընթերցողը ծոռնուհին է՝ 3-ամյա Էլիզան:

Երաժշտության բնագավառում անգերազանցելի էր **Ստեփան Սուքիասյանի** «Աղոթքի վերջին տողը» ստեղծագործությունը: Այստեղ կոմպոզիտորի զգացողություններն են, ցավն ու տառապանքը: Երկրաշարժին նվիրված ստեղծագործությունում կոմպոզիտորն աղոթում է, որ այլեւս նման բան չկրկնվի:

«Քանդակ» անվանակարգում լավագույնը ճանաչվեց **Զավեն Կոշտոյանի** «Գյումրիի կանայք կամ բաղնիք գնացողները» ստեղծագործությունը: «Ռադիո եւ հեռուստատեսություն» անվանակարգում առանձնացավ **Անահիտ Թադեւոսյանի** «Հոբելյաններ, կերպարվեստ» հաղորդաշարը: «Թատրոն» անվանակարգում, որը հաստատել են Ֆիլադելֆիայից Բաբկեն եւ Անահիտ Մկրյանները, լավագույնը **Ռուբեն Մուրադյանն** էր՝ «Սպարտակ» բալետում Սպարտակի դերակատարման համար:

«**Ազգ**» օրաթերթում լավագույն հրապարակում անվանակարգում «Հակոբ Վարդիվառյանի» անվան մրցանակը ստացավ Գերմանիայից «**Ազգ**» օրաթերթի հավատարիմ աշխատակից եւ նվիրյալ լրագրող **Անահիտ Հովսեփյանը** «Միջազգային լրահոս» նյութերի համար: Այս մրցանակը հաստատել է Նյու Ջերսիից լրագրող եւ հասարակական գործիչ **Հ. Վարդիվառյանը**:

ՀՀ Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանի** գնահատմամբ՝ «Վահան Թեքեյան» մրցանակաբաշխությունը յուրօրինակ կամուրջ է Սփյուռքի եւ հայրենիքի միջեւ: «Այն ոգեւորում է, նոր լիցքեր հաղորդում: Սփյուռքի միավորման կարեւոր ձեռնարկ է, որ գնալով պետք է ընդլայնվի»:

## Մի՞թե ինտերնետ հասանելիությունը Հայաստանում հետընթաց է ապրել

*1-ին էջից*

Եթե 2009-ի վերջում 1 Մբիթ/վ արագագործ ինտերնետի մեծածախ գինը 234 հազար դրամ էր, ապա 2010-ի վերջում 71 հազար դրամ էր: Այս տարվա առաջին եռամսյակին արդեն 1 Մբիթ/վ ինտերնետի գինը կազմում է 55 հազար դրամ: Գների նման նվազումը բնականաբար բերել է սպառման ծավալների աճի: Եթե 2009-ի վերջում Հայաստանը ընդհանուր առմամբ սպառում էր շուրջ 3,2 Գբիթ/վ, ապա 2011-ի առաջին եռամսյակի արդյունքներով՝ 11,3 Գբիթ/վ ինտերնետ: Ավելացել է նաեւ սպառողների թվաքանակը: Ըստ պաշտոնական վիճակագրության, եթե 2009-ի վերջին Հայաստանում արագագործ ինտերնետի սպառողների թվաքանակը 70 հազար էր, ապա 2010-ի վերջին այդ թիվն ավելացավ 2,5 անգամ, կազմելով 173 հազար: Արդեն այս տարվա առաջին երեք ամիսների արդյունքներով, արագագործ ինտերնետի սպառողների թիվը 235 հազար էր: Համակարգիչների թվի աճը նույնպես զգալի է: 2010-ին Հայաստանում վաճառվել է շուրջ 90 հազար նոր համակարգիչ, երբ 2009-ին վաճառվել էր ընդամենը 28 հազար:

Վերոնշյալ ցուցանիշները թեեւ բավարար չեն ասելու համար, որ մենք արդեն դարձել ենք տեղեկատվական հասարակություն, բայց չի կարելի չնկատել, որ դրական տեղաշարժն իսկապես փոքր չէ: Հարկ ենք համարում հիշեցնել, որ այս բնագավառի զարգացման ուղղությամբ մի շարք քայլեր են արվել նաեւ կառավարության կողմից: Մասնավորապես Հայաստանի կառավարությունն անցել է էլեկտրոնային կառավարման համակարգի, ներդրվել է էլեկտրոնային ստորագրությունը: Էլեկտրոնային են դարձել լիցենզիաների տրամադրումը, ձեռնարկությունների գրանցումը, հարկային հաշվետվությունների տրամադրումը եւ այլն: Այս գործընթացը շարունակվում է նաեւ այլ ոլորտներում: Հայաստանում «Վիվասել-ՄՏՍ»-ն անցյալ տարի ներդրեց «Երկարաժամկետ էվոլյուցիայի»՝ (LTE) տեխնոլոգիաների վրա հիմնված չորրորդ սերնդի (4G) լայնաշերտ ծառայությունների ցանցը: Այս ամենից հետո մեր երկրի հետընթացը Համաշխարհային տնտեսական ֆորումի զեկույցում իսկապես որ զարմանալի է թվում:

Երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ զեկույցի այդ գնահատականի իրական պատճառներից մեկի մասին խոսեց «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հովիկ Մուսայելյանը: Նա քննադատեց համաշխարհային տնտեսական ֆորումի հարցմանը մասնակցած գործարարներին, որոնք միայն դժգոհում են տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մակարդակից, անտեղյակ լինելով կատարված փոփոխություններից եւ չեն ձգտում իրենց բիզնեսում կիրառել այս ոլորտի նորությունները: Նրանց պատասխաններն էլ այս գնահատականի հիմքերից են դարձել:

Ի դեպ, Հայաստանում ինտերնետի օգտագործման ցուցանիշների վերաբերյալ շատ ավելի արժանահավատ տվյալներ է հրապարակել ինտերնետային վիճակագրություն վարող Internet World Stats ոչ պակաս հեղինակավոր գործակալությունը: Համաձայն այդ տվյալների, 2010-ի հուլիսի դրությամբ Հայաստանում գրանցվել է ընդհանուր առմամբ մոտ 1,4 մլն ինտերնետ օգտագործող (ներառյալ բջջային հեռախոսներով ինտերնետից օգտվողները): Այս ցուցանիշով մեր երկիրը 7 անգամ գերազանցել է 2009-ի 191 հազար ինտերնետ օգտագործող ցուցանիշը՝ 258 երկրների մեջ զբաղեցնելով 76-րդ հորիզոնականը: Ընդ որում, ինտերնետ օգտագործողների տեսակարար կշռով Հայաստանը նախկին խորհրդային երկրներից հետ է մնում միայն Մերձբալթյան երեք հանրապետություններից, իսկ մյուսներն այս ցուցանիշներով զիջում են մեզ:

Մնում է միայն ենթադրել, որ Համաշխարհային տնտեսական ֆորումի հաջորդ զեկույցում արտացոլված կլինեն վերոնշյալ փոփոխությունները, իսկ մեր երկրի առաջընթացը 2011-ին ավելի մեծ կլինի արդեն 2010-ի համեմատ:

# Հռիփսիմե Խուրշուդյանն ու Գեւորգ Պողոսյանը պատվո պատվանդանին




Կազանում վերջնագիծը հատեց ծանրամարտի Եվրոպայի հերթական առաջնությունը: Հայաստանի հավաքականը թիմային հաշվարկով գրավեց 5-րդ տեղը: Մեր ծանրորդները երկամարտի արդյունքով նվաճեցին 3 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալ: Ի տարբերություն անցյալ տարի Մինսկում կայացած Եվրոպայի առաջնության, որտեղ հայ ծանրորդներից երկուսն արժանացան չեմպիոնի տիտղոսին, այս անգամ մեր 10 ներկայացուցիչներից ոչ մեկին չհաջողվեց կանգնել պատվո պատվանդանի առաջին աստիճանին:

Սպասելիքները մեծ էին նախորդ տարվա Եվրոպայի չեմպիոն Գեւորգ Պողոսյանից: Վերջինս Մինսկում երկամարտի 369 կգ (165+204) արդյունքով չեմպիոն էր հռչակվել մինչեւ 85 կգ քաշային կարգում: Իսկ ահա Կազանում նա հանդես եկավ իր համար նոր՝ մինչեւ 94 կգ քաշային կարգում: Իհարկե, Գեւորգին դժվար էր միանգամից հարմարվել քաշային նոր կարգին եւ պայքարել ուժեղագույնի տիտղոսի համար: Նա երկամարտի 389 կգ (173+216) արդյունքով դարձավ բրոնզե մեդալակիր: Պողոսյանը յուրաքանչյուր վարժությունում միայն մեկ հաջող մոտեցում կատարեց: Պոկում վարժությունում առաջին մոտեցմամբ նա բարձրացրեց 173 կգ, իսկ հետո ձախողվեց 178 կգ-ը բարձրացնելիս: Եթե ծանրաձողը ենթարկվեր նրան, Գեւորգը պոկում վարժությունում բրոնզե մեդալի փոխարեն ոսկե մեդալ կստանար:




Հրում վարժությունում էլ նա միայն 2-րդ մոտեցումը հաջող կատարեց՝ բարձրացնելով 216 կգ, ինչը նրան կրկին բրոնզե մեդալ պարգեւեց: Իսկ ահա 220 կգ-անոց ծանրաձողը գլխավերեւում պահել չհաջողվեց: Այլապես հայ ծանրորդը կնվաճեր Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը, որը բաժին հասավ ռուսաստանցի Անդրեյ Դեմանովին՝ 391 կգ (171+220): Արծաթե մրցանակակիր դարձավ մոլդովացի Անատոլի Կիրիկուն՝ 390 կգ (173+217):

Հայաստանին վերջին մեդալները պարգեւեց Հռիփսիմե Խուրշուդյանը: Անցյալ տարի մինչեւ 75 կգ քաշային կարգում նա Եվրոպայում 3-րդ մրցանակակիր էր դարձել: Կազանում հանդես գալով 75 կգ-ից բարձր քաշային կարգում, Հռիփսիմեն երկամարտի 254 կգ (114+140) արդյունքով Եվրոպայի փոխչեմպիոնուհի հռչակվեց: Ինչպես տեսնում ենք, Կազանում նա 19 կգ պակաս բարձրացրեց, քան մեկ տարի առաջ Մինսկում: Եվս մեկ ուշագրավ փաստ. Հռիփսիմեն 76 կգ-ով զիջեց Եվրոպայի չեմպիոնուհի, ռուսաստանցի Տատյանա Կաշիրինային: Վերջինս մրցակցությունից դուրս էր ու ֆենոմենալ արդյունքի հասավ: Նա երկամարտում ցույց տվեց 327 կգ (146+181) արդյունք: 20-ամյա մարզուհին, որ 3-րդ անգամ նվաճեց Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսը, համաշխարհային երկու ռեկորդ սահմանեց պոկում վարժությունում եւ երկամարտում: Իսկ նրա ցուցանիշներն առանձին վարժություններում եւ երկամարտում համաշխարհային նոր ռեկորդներ էին մինչեւ 23 տարեկան կանանց շրջանում:

Հայաստանի վերջին պատվիրակը՝ Արթուր Բաբայանը մինչեւ 105 կգ քաշային կարգում երկամարտի 380 կգ (170+210) արդյունքով գրավեց 8-րդ տեղը: Չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Հաջիմուրադ Ակաեւը՝ 425 կգ (195+230): 2-րդ տեղը գրավեց վրացի Գիա Մաչիվարիանին՝ 400 կգ (183+217): Բրոնզե մեդալակիր դարձավ լեհ Բարտլոմեյ Բոնկը՝ 394 կգ (180+214):

Եվ վերջապես գերծանրքաշային ծանրորդների մրցավեճում ուժեղագույն ճանաչվեց ռուսաստանցի Դմիտրի Լապիկովը՝ 419կգ (192+227): Արծաթե մեդալը նվաճեց ուկրաինացի Իգոր Շիմեչկոն՝ 412 կգ (195+217): Բրոնզե մրցանակակիրը չեխ Ժիրի Օրսագն է՝ 410 կգ (184+226):

# «Ուլիսը» շարունակեց հաղթարշավը

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 5-րդ տուրն անցավ դաշտի տերերի բացահայտ առավելությամբ, որոնք հաղթեցին բոլոր չորս խաղերում էլ: Ընդ որում հյուրերին չհաջողվեց գեթ մեկ գնդակ խփել մրցակցի դարպասը:

Առաջնությունում հաղթարշավն է շարունակում «Ուլիսը», որը խոշոր՝ 3-0 հաշվով պարտության մատնեց «Արարատին»: Աչքի ընկան Դավիթ Գրիգորյանը, Արտակ Գրիգորյանն ու Գեւորգ Նռանյանը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

**Արկադի Անդրեասյան** («Արարատ»)- Արարատցիները մշտապես սխալներ են թույլ տալիս, չեն պահպանում խաղային կարգապահությունը: Նրանցից ոմանք դեռեւս բարձրագույն խմբում խաղալու փորձ չունեն: Այսօր դարպասապահն էլ սխալներով խաղաց, թիմակիցներին ճիշտ չէր հուշում: Ուստի 2-րդ գոլից հետո նա փոխարինվեց: Մենք փորձառու ֆուտբոլիստներին խաղալու հնարավորություն ենք տվել, սակայն նրանք չեն արդարացնում սպասելիքները: Ավելի ճիշտ կլինի նրանց փոխարեն խաղան երիտասարդները: Մենք պետք է ազատվենք նման ֆուտբոլիստներից, այդ թվում հավանաբար նաեւ դարպասապահ Ալեքսանդր Պետուխովից:

**Սեւադա Արզումանյան** («Ուլիս»)- Մինչեւ առաջին գոլը մեզ համար շատ դժվար էր խաղալը: Սակայն մրցակցի պաշտպանների սխալից հետո կարողացանք բացել հաշիվը: Ընդմիջումից հետո խփած արագ գոլը վստահություն ներշնչեց մեր տղաներին: 2-րդ խաղակեսում մեր պաշտպանների գործողություններում թերություններ նկատվեցին: Այժմ մեզ համար կարեւորը մինչեւ հաջորդ խաղը ֆուտբոլիստների վերականգնումն է:

Աստիճանաբար մրցաշարային գործերն է բարելավում «Փյունիկը», որը սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթեց «Շիրակին»: Հանդիպման ելքը վճռեց 17-րդ րոպեին Էդգար Մանուչարյանի խփած միակ գնդակը: 2-րդ խաղակեսում շիրակցի Անդրանիկ Բարիկյանին հաջողվեց գրավել մրցակցի դարպասը, սակայն մրցավարը «խաղից դուրս» վիճակ արձանագրեց: Այս առնչությամբ «Շիրակի» մարզիչ Ֆելիքս Խոջոյանը նշեց, որ հարկավոր է դիտել այդ դրվագի տեսագրությունը:

«Շիրակի» հետ խաղում «Փյունիկի» դարպասը պաշտպանում էր երիտասարդ Կարեն Իսրայելյանը: «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը տեղեկացրեց, որ սերբ դարպասապահ Դորդե Պանտիչի հարցում սխալվել են, ուստի նրա հետ պայմանագիրը լուծարվեց: Ներկայումս «Փյունիկը» դարպասապահի կարիք ունի: Տրանսֆերային պատուհանի բացման ժամանակ «Փյունիկը» կձգտի նոր դարպասապահ հրավիրել:

Ընթացիկ առաջնությունում հաջող են հանդես գալիս «Գանձասարի» ֆուտբոլիստները, որոնք առայժմ անպարտելի են: «Գանձասարը» Կապանում 1-0 հաշվով հաղթեց «Միկային»: Խաղասկզբում Գեւորգ Կասպարովի պաշտպանած դարպասը գրավեց Վիրգին Մարշավելան: «Գանձասարը» 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց:

Անհաջող ելույթներն է շարունակում «Բանանցը», որին ոչ մի կերպ չի հաջողվում անդրանիկ հաղթանակը տոնել: Իջեւանում էլ «Բանանցը» 0-1 հաշվով պարտվեց «Իմպուլսին», որին հաղթանակ պարգեւեց Արթուր Պետրոսյանի խփած միակ գնդակը:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ուլիս | 5 | 4 | 1 | 0 | 10-2 | 13 |
| 2. Գանձասար | 5 | 3 | 2 | 0 | 4-1 | 11 |
| 3. Փյունիկ | 5 | 3 | 1 | 1 | 7-5 | 10 |
| 4. Միկա | 5 | 2 | 2 | 1 | 6-3 | 8 |
| 5. Իմպուլս | 5 | 2 | 0 | 3 | 6-6 | 6 |
| 6. Շիրակ | 5 | 1 | 1 | 3 | 3-6 | 4 |
| 7. Բանանց | 5 | 0 | 2 | 3 | 5-9 | 2 |
| 8. Արարատ | 5 | 0 | 1 | 4 | 1-10 | 1 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Գեորգի Կրասովսկի | «Ուլիս» | 3 |
| Գեւորգ Ղազարյան | «Փյունիկ» | 2 |
| Արթուր Քոչարյան | «Գանձասար» | 2 |
| Նարեկ Բեգլարյան | «Միկա» | 2 |
| Արտյոմ Ադամյան | «Ուլիս» | 2 |
| Բրունո Կորեա | «Բանանց» | 2 |
| Զավեն Բադոյան | «Իմպուլս» | 2 |

ՄՐՑԱՇԱՐ

# Հայաստանցի 6 բռնցքամարտիկներ արժանացան գլխավոր մրցանակներին

**Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ավարտվեց ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի անվան բռնցքամարտի միջազգային 2-րդ մրցաշարը: Մրցումների վերջին օրը հայտնի դարձան հաղթողներն ու մրցանակակիրները:**

**Եզրափակիչում բոլորից շատ՝ 11 ներկայացուցիչ ուներ Հայաստանը: Հայ բռնցքամարտիկներից վեցը դարձան մրցաշարի հաղթողներ՝ պարգեւատրվելով 5 հազարական դոլարով: Մինչեւ 49 կգ քաշային կարգում եզրափակիչում մրցեցին Եվրոպայի նախկին չեմպիոն Հովհաննես Դանիելյանն ու 2009-ի պատանիների աշխարհի չեմպիոն Կորյուն Սողոմոնյանը: Համառ մրցապայքարում 28-22 հաշվով հաղթեց Սողոմոնյանը:**




**Մինչեւ 52 կգ քաշային կարգում հաղթող ճանաչվեց Դերենիկ Գիժլարյանը, որի մրցակիցն ուզբեկ բռնցքամարտիկ Ժասուրբեկ Լատիպովն էր: Մինչեւ 56 կգ քաշայինների եզրափակիչը վերածվեց հայաստանցի բռնցքամարտիկներ Հովհաննես Բաչկովի եւ Արամ Ավագյանի դիմակայության: Ավելի դիպուկ գտնվեց Բաչկովը, որն էլ արժանացավ 5000 դոլար պարգեւավճարի:**

**60 կգ քաշայինների մրցավեճում հաջողությունն ուղեկցեց Վլադիմիր Սարուխանյանին, որը Ռուսաստանի հավաքականի կազմում նվաճել է աշխարհի երիտասարդների չեմպիոնի տիտղոսը: Նա պարտության մատնեց ղազախ Գանի Ժնայլայովին: 64 կգ քաշայինների եզրափակիչը չկայացավ: Հրաչյա Ջավախյանի մրցակիցը՝ չեխ Զլադեկ Զդենեկը վնասվածքի պատճառով չկարողացավ ռինգ դուրս գալ: Հաղթանակը շնորհվեց Հրաչյա Ջավախյանին: Նրան հանձնվեց նաեւ մրցաշարի լավագույն բռնցքամարտիկի համար նախատեսված մրցանակը:**

**Մինչեւ 69 կգ քաշային կարգում Սամվել Մաթեւոսյանին բաժին էր հասել շատ ուժեղ մրցակից՝ աշխարհի կրկնակի չեմպիոն, ղազախստանցի Սերիկ Սապիեւը: Վերջինս արդեն 2-րդ ռաունդում հաղթեց մրցակցին: Մինչեւ 75 կգ քաշային կարգում ուժեղագույնն Արթուր Խաչատրյանն էր: Նա միավորներով առավելության հասավ ուկրաինացի Ալեքսանդր Գանզուլվայի նկատմամբ:**

**Մինչեւ 91 եւ 91 կգ-ից բարձր քաշային կարգերում Ազատ Դավթյանն ու Արմեն Սիմոնյանը դարձան արծաթե մրցանակակիրներ՝ եզրափակիչում զիջելով համապատասխանաբար Ղազախստանի ներկայացուցիչներ Վասիլի Լեւիտին եւ Իվան Դիչկոյին: Մինչեւ 81 կգ քաշային կարգում էլ հաղթող ճանաչվեց ղազախ բռնցքամարտիկ Ասկար Աբդուլաեւը, որը պարտության մատնեց հույն Իոանիս Միլիտոպուլոսին:**

# Հայ սամբիստների հարուստ ավարը

**Հայ սամբիստները հաջող հանդես եկան Չեխիայի մայրաքաղաք Պրահայում անցկացված Եվրոպայի պատանիների, երիտասարդների եւ աղջիկների առաջնությունում՝ նվաճելով 2 արծաթե եւ 5 բրոնզե մեդալ:**

**Առավել հաջող էր Հովհաննես Ալեքսանյանի (56 կգ) եւ Ռազմիկ Պետոյանի (52 կգ) ելույթը, որոնք հաղթելով մրցակիցներին, հասան մինչեւ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտերում պարտվելով, նրանք արժանացան արծաթե մեդալի: Բրոնզե մրցանակակիրներ դարձան Գրիգոր Մխիթարյանը (48 կգ), Ռոզա Խաչատրյանը (52 կգ), Սերյոժա Ալեքսանյանը (57 կգ), Ռաֆիկ Մանուկյանը (65 կգ) եւ Մհեր Կարապետյանը (82 կգ):**

# Նոր մրցակարգով

Սենտ Լուիսում մեկնարկել է շախմատի ԱՄՆ-ի առաջնությունը, որն անցկացվում է նոր մրցակարգով: Տղամարդկանց մրցաշարում 16 մասնակիցները բաժանվել են 2 ենթախմբի: Շրջանաձեւ մրցակարգով անցկացվելիք մրցաշարի 2 լավագույն շախմատիստները պայքարը կշարունակեն եզրափակիչ փուլում: Չորս ուժեղագույնները զույգեր կկազմեն եւ դասական շախմատի 2 պարտիայից բաղկացած մրցախաղում կվիճարկեն եզրափակիչի ուղեգիրը: Ոչ-ոքի արդյունքի դեպքում կնշանակվի արագ շախմատի 2 պարտիայից բաղկացած մրցախաղ, իսկ անհրաժեշտության դեպքում վճռորոշ պարտիայում կորոշվի հաղթողը:

Կանանց մրցաշարում 8 շախմատիստուհիները մեկ շրջանով անցկացվող մրցախաղերից հետո կորոշեն կիսաեզրափակիչի 4 մասնակիցներին ու նույն սկզբունքով կվիճարկեն եզրափակիչի ուղեգիրը: Տղամարդկանց մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 166 հազար դոլար է, կանանցը՝ 60 հազար դոլար:

Տղամարդկանց մրցաշարի 1-ին ենթախմբում ընդգրկված Վարուժան Հակոբյանը 3 տուրից հետո 1,5 միավորով 4-րդ տեղում է: Նա մրցաշարը սկսեց Ռայ Ռոբսոնի հետ ոչ-ոքի արդյունքով, ապա զիջեց Գատա Կամսկուն, իսկ հաջորդ տուրում հաղթեց Ալեքսանդր Ստրիպունսկուն:

1-ին ենթախմբի առաջատարներն են Գատա Կամսկին, Յուրի Շուլմանն ու Ալեքսանդր Իվանովը, որոնք վաստակել են 2-ական միավոր: 2-րդ ենթախմբում 2,5 միավորով աղյուսակը գլխավորում է Սեմ Շենկլենդը:

Կանանց մրցապայքարում Տաթեւ Աբրահամյանը 1,5 միավորով 5-րդ տեղում է: Նա հաղթանակով սկսեց մրցաշարը՝ պարտության մատնելով Կամիլա Բագինսկայտեին: 2-րդ տուրում հայ շախմատիստուհին պարտվեց Իրինա Կրուշին, իսկ հաջորդ պարտիան Սաբինա Ֆոյշորի հետ ավարտեց ոչ-ոքի: Վերջինս 2,5 միավորով գլխավորում է աղյուսակը: 2-ական միավոր ունեն Աննա Զատոնսկիխը եւ Իրինա Կրուշը:

# Հաղթողին կանվանի ավարտական տուրը

**Դուբայում ավարտին է մոտենում շախմատի միջազգային մրցաշարը: Ավարտական տուրից առաջ հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Դավիթ Պետրոսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Տիգրան Քոթանջյանը, Արտաշես Մինասյանն ու Գեւորգ Հարությունյանը, որոնք վաստակել են 5,5-ական միավոր: 7 միավորով առաջատարը հնդիկ գրոսմայստեր Պարիմարջան Նեգին է, որին կես միավոր է զիջում նրա հայրենակից Աբհիջեթ Գուպտան: Ավարտական տուրում նրանք հանդիպելու են միմյանց հետ: Այդ պարտիան էլ կարող է անվանել մրցաշարի հաղթողին:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

**ԲՅՈՒՐԱԿԱՆ**

# Աստղագիտությունը ռոմանտիկ, սակայն բարդ ու թանկարժեք գիտություն է

Քչերը գիտեն, որ աշխարհում 250 հայազգի աստղագետներ կան, իսկ աստղագիտության մակարդակով Հայաստանը 20 առաջատար երկրների թվում է: Մեզանում նույնիսկ կան մարդիկ, որոնք մտածում են, թե Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանն այլեւս չի գործում: Մարդիկ գիտության, այդ թվում եւ աստղագիտության ոլորտի նորություններին իրազեկ չեն, քանի որ գիտության ոլորտն հավուր պատշաճի չի լուսաբանվում: Որ գիտությունը լուսաբանելու մեջ լրագրողները շահագրգռված չեն, իսկ հասարակությունն էլ ինչ-որ առումով անտարբեր է դարձել գիտական նորությունների հանդեպ, դա միայն լրագրողների մեղքը չէ: Դրանում Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ **Արեգ Միքայելյանը** տեսնում է նաեւ գիտնականների մեղավորությունը. «Հայաստանում գիտության PR-ը շատ թույլ է: Գիտնականներս պարտավոր ենք մամուլին պարբերաբար ներկայացնել մեր արդյունքները, եւ ներկայացնել հանրամատչելի լեզվով»:



Գիտությունն ավելի լավ լուսաբանելու եւ ոլորտի խնդիրներին ու նորություններին հասարակությանն իրազեկ դարձնելու նպատակով անցյալ տարի կազմվեց գիտական լրագրության խումբ, որի մեջ ընդգրկված են գիտության մասին գրող լրագրողները:

Ապրիլի 16-ին Բյուրականի աստղադիտարանում կազմակերպվեց գիտական լրագրության մեկօրյա սեմինար, որի ժամանակ Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող Արեգ Միքայելյանը նախ անդրադարձավ աստղագիտության ու աստղադիտարանի ներկայիս վիճակին: Նրա խոսքով՝ ինտերնետային կայքերում եւս գիտության ոլորտը պետք է լավ ներկայացվի: Իսկ լրագրողների առաջին քննադատությունը վերաբերում էր Բյուրականի աստղադիտարանի կայքին (bao.am), որն ընդամենը կցկտուր ինֆորմացիա է պարունակում: Կայքի նման վիճակի պատճառը, ըստ պարոն Միքայելյանի, գումարի պակասն է:

Աստղադիտարանի տնօրեն **Հայկ Հարությունյանն** էլ նշեց, որ աստղադիտարանի խնդիրները հիմնականում կապված են ֆինանսների անբավարարությանը: Աստղադիտարանին պետական բյուջեից տարեկան հատկացվում է 63 միլիոն դրամ: Բնականաբար, անկախության տարիներին աշխատանքային հաստիքները կրճատվել են: «Ներկայումս աստղադիտարանը 85 աշխատակից ունի, բայց պետականորեն ֆինանսավորվում են 68 հոգին», ասում է Հայկ Հարությունյանը եւ հավելում, որ աստղագիտությունը պետք է զարգանա պետական ֆինանսավորման միջոցով. «Չի կարելի ենթակառուցվածք պահպանել միջազգային դրամաշնորհներով: Աստղադիտարանը պետական սեփականություն է, որը պետք է պահպանի պետությունը»:

Աստղագիտությունը թանկ գիտություն է, կան երկրներ, որտեղ աստղագիտություն ընդհանրապես չկա: Ներկայումս աստղագիտության մեջ առաջատար է Միացյալ Նահանգները: Իսկ ամենամեծ աստղադիտակը, որի հայելու տրամագիծը 10,4 մետր է, գտնվում է Կանարյան կղզիներում: Թեեւ աստղագիտության մակարդակով մեր երկիրը 20 առաջատար երկրների շարքում է, սակայն Բյուրականի աստղադիտարանն այսօր արդեն միջակ է համարվում: «Մենք հետ ենք մնում, որպես ենթակառուցվածք Բյուրականի աստղադիտարանը բավականին վատթար վիճակում է», նշում է Արեգ Միքայելյանը:

Շաբաթ օրը սեմինարի մասնակիցները եղան նաեւ Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանում, շրջեցին աստղադիտարանում եւ հնարավորություն ունեցան տեսնելու նաեւ Բյուրականի խոշորագույն աստղադիտակը, որը 2,6 մետր է: Արեգ Միքայելյանի փոխանցմամբ՝ այն կառուցվել է 1975-ին, իսկ պաշտոնական բացումը եղել է 1976-ին, ժամանակին դիտակի կառուցման ծախսերը կազմել են 8 միլիոն ռուբլի: Ներկայումս դիտումների համար աստղադիտարանը շատ հայտեր է ստանում, եւ յուրաքանչյուր աստղագետի առանձին ժամանակ է հատկացվում: Պարոն Միքայելյանը նշում է, որ վիճակագրության համաձայն, աշխարհում աստղադիտակները դիտումներին չեն բավարարում. հայտերը բազմաթիվ են: Կրկին խոսելով հայաստանյան խոշորագույն դիտակից՝ Ա. Միքայելյանն ասում է, որ ինչ-որ առումով այն արդեն հնացել է:

Ինչեւէ, աստղագիտության խնդիրներն ու նորությունները բազմաթիվ են, իսկ պատմությունը՝ շատ հետաքրքրական, ու եթե մեր երկրում կա նման գիտություն, ապա հարկավոր է պահպանել այն ու խթանել դրա զարգացումը: Եվ ինչպես նշեց աստղադիտարանի տնօրենը. «Վիկտոր Համբարձումյանի համար իր տունն ու արձանը շատ կարեւոր չէին, նրա համար կարեւոր էր, որ իր արած գործը շարունակվեր նաեւ հետագայում»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Բյուրական-Երեւան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթը, հայտնում ենք, որ 2011 թվականի ապրիլի 29-ին, ժամը 17:00-ին տեղի է ունենալու «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ սեփականության իրավունքով պատկանող վարչական շենքում (քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փող. թիվ 13):

Լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ 590402 հեռախոսահամարով կամ www.ashib.am ինտերնետային կայքում:

**Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում**

**Ծանուցում.** «Կամուրջ ՈւՎԿ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող սպառողական վարկերը տրամադրվում են խմբային երաշխիքով, հետևյալ պայմաններով. խմբի անդամների քանակ՝ 3 – 15 անդամ ժամկետ՝ 3 - 18 ամիս, վարկի գումար՝ 50,000 - 1,200,000 ՀՀ դրամ, տարեկան տոկոսադրույք՝ 22% - 24% (կախված վարկավորման փուլից, հաշվարկվում է վարկի մնացորդային գումարի նկատմամբ), վարկի/կանխիկի տրամադրման վճար՝ 2% - 3%, սպասարկման ամսական վճար՝ 0.6% - 1%, տուժանք՝ օրական 1% (առավելագույնը 30 օրացուցային օր):

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն**
2011թ. Մարտի 31 դրությամբ

*Հազար ՀՀ դրամ*

| | | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա վերջ |
|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | |
| | Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 253,631 | 458,885 |
| | Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 3,076,917 | 2,407,608 |
| | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 33,671 | 7,752 |
| | Ստացվելիք տոկոսներ | 30,678 | 22,449 |
| | Այլ ակտիվներ | 8,048 | 2,201 |
| | **Ընդամենը ակտիվներ** | **3,402,945** | **2,898,895** |
| **2** | **Պարտավորություններ** | | |
| | Հաճախորդներից ստացված փոխառություններ | 901,910 | 181,078 |
| | Հետաձգված հարկային պարտավորություններ | 330 | 823 |
| | Այլ պարտավորություններ | 205,896 | 2,011,416 |
| | **Ընդամենը պարտավորություններ** | 1,108,136 | 2,193,317 |
| 3 | Կապիտալ | | |
| | Կանոնադրական կապիտալ | 500,000 | 180,000 |
| | Կուտակված շահույթ | 1,794,809 | 525,578 |
| | **Ընդամենը կապիտալ** | 2,294,809 | 705,578 |
| | **Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ** | **3,402,945** | **2,898,895** |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն**
2011թ. Մարտի 31

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 239,917 | - | 239,917 | - |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | - | - | - | - |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **239,917** | **-** | **239,917** | **-** |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս) | 11 | - | 11 | - |
| Այլ գործառնական եկամուտներ | 86,567 | - | 86,567 | - |
| Այլ գործառնական ծախսեր | (3,027) | - | (3,027) | - |
| Անտոկոս փոխառության զեղչումից եկամուտ | 1,269,562 | - | 1,269,562 | - |
| **Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ** | **1,593,030** | **-** | **1,593,030** | **-** |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | (201,224) | - | (199,251) | - |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (122,575) | - | (122,575) | - |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | **1,269,231** | **-** | **1,271,204** | **-** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | - | - | - | - |
| **Ժամանակաշրջանի Շահույթ** | **1,269,231** | **-** | **1,271,204** | **-** |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
2011թ. Մարտի 31

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | | | Չբաշխված շահույթ/(վնաս) | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանոնադրական կապիտալ | Հետ գնված կապիտալ | Զուտ գումար | | | | |
| Նախորդ ժամանակաշրջան | | | | | | | |
| Մնացորդը առ 2009թ. Դեկտեմբերի 31 | | | | | | | |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 180,000 | | | | 180,000 | | 180,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 180,000 | | | | 180,000 | | 180,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 525,578 | 525,578 | | 525,578 |
| Շահութաբաժիններ | | | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | | | 525,578 | 525,578 | | 705,578 |
| Հաշվետու ժամանակաշրջան | | | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | | | 525,578 | 525,578 | | 705,578 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 320,000 | | | | 320,000 | | 320,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 320,000 | | | | 320,000 | | 320,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | |
| Համապարփակ եկամուտ | 1,269,231 | | | 1,269,231 | | | 1,269,231 |
| Շահութաբաժիններ | | | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Մարտի 31 | 500,000 | | | 1,794,809 | 2,114,809 | | 2,294,809 |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն**
2011թ. Մարտի 31

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| **1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **(334,318)** | **-** |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը** | **192,582** | **-** |
| Ստացված տոկոսներ | 228,938 | |
| Վճարված տոկոսներ | - | |
| Ստացված զուտ կոմիսիոն եւ նմանատիպ գումարներ | 61,484 | |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (64,880) | - |
| Վճարված հարկեր | (32,960) | |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից** | **(526,900)** | **-** |
| Հաճախորդներին տրամադրված վարկերի նվազում (ավելացում) | (870,850) | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | 343,950 | |
| **2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | **(947)** | **-** |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | | |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (947) | |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | - | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | - | |
| **3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **130,000** | **-** |
| Վճարված շահաբաժիններ | | - |
| Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում) | | - |
| Այլ փոխատուներից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | 130,000 | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում | - | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | - | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | **11** | |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **(205,254)** | **-** |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | **458,885** | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | **253,631** | |

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
2011թ. Մարտի 31

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 500,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 694,964 | 150,000 | խախտում առկա չէ |

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊ ընկերությունը իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում, հետեւաբար մնացած հիմնական տնտեսական նորմատիվները "Կամուրջ" ՈւՎԿ ՍՊԸ-ի վրա չեն տարածվում:

*Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 18.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: